

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Սաղիմական Ուխտագնացութիւն Հայոց Ս. Զատիկի Առիթով

Ապրիլ 20 - 29, 1992

Գրեց՝ ԱՐՏԷՆ Ա. ԲԷՆՅ. ԱՇՃԵԱՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Օգտագործելով 1992-ի ձմրան սկիզբը ստացուած յայտարարութիւն մը, երէցկիւն Մարիամ ու եւ որոշեցինք մեր տարեկան արձակուրդի առաջին տասն օրերը յատկացնել զէպի Հայ Երուսաղէմ ուխտագնացութեան մը: Կապ հաստատեցինք Տիկ. Էն Տէվլէնեանի հետ՝ ուղեւորութեանց կազմակերպիչ մը Պէյսայտ - Ն. Ե. - րնակող, խնդրելով որ իր պատրաստելիք ծրագրին մաս կազմէ Երուսաղէմի Հայոց Զատիկը՝ Ապրիլ 28-ին տօնելի այնտեղ, համաձայն Հին Տոմարի:

Տիկ. Տէվլէնեանի յայտարարութեանց ընդ առաջ գացին տասնէ աւելի Ամերիկահայեր: Սակայն ասոնցմէ ոմանք՝ մտահոգուած Իսրայէլեան գրաւման տակ գտնուող Հողամասերու մէջ պատահած նոր արիւնահեղութիւնէ, Հրաժարեցան ուխտագնացութեան մասնակցելէ: Խուսիքը վերածուեցաւ եօթն անհատի, ներառեալ կազմակերպիչ Տիկ. Էն Տէվլէնեանը: Եօթնին մէջ նախապէս Երուսաղէմական Ս. Զատիկի փորձառութիւնը ունեցած միակ անհատը եւ ի՞նչ նախկին միաբան Ուխտին Սրբոց Յակոբեանց - ուսանող սարկաւազի հանգամանքով: Սակայն այդ փորձառութիւնը զիս կը տանէր եւ կէս դարէ աւելի, յիշելու համար Ս. Զատիկը 1941 տարուան, երբ երջանկայիշատակ ծիսագէտ Տ. Մեսրոպ Պատրիարք Նշանեանի պաշտօնավարութեան օրով կը բոլորէի Ժնոնեզաւորաց Ընծայարանի երրորդ - աւարտական - տարեւորջանը: 1941 բախտորոշ տարին. աշխարհի ուշադրութիւնը կեդրոնացած էր պատերազմէ կլանուած Եւրոպայի վրայ, եւ Հայ Եկեղեցին տակաւին սուգի մէջ էր եղերարախտ Տ. Խորէն Ա. Մուրադրէկեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի խորհրդաւոր վախճանումին - 1938 - հետեւանքով: Երուսաղէմ եւ ամբողջ Պաղեստին Բրիտանական Հոգատար իշխանութեան ներքեւ կը գտնուէին:

Երուսաղէմի Հայոց նորընտիր Պատրիարք եւ Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի նախորդ Առաջնորդ ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան տեղեակ էր ծրագրուած այս ուխտագնացութեան: Սրբազանին թնայողութեամբ եւ Սաղիմական Հայ գործակալի մը օժանդակութեամբ Տիկ. Էն Տէվլէնեան պատրաստած էր մեր փոքր խումբի յայտագիրը: Իմ պարապային՝ ուղեւորութեան պատրաստուելու մտադրութեամբ ձեռնարկեցի վերստին կարգաւ Տ. Մաղաթիա Արքեպս. Օրմանեանի Հայկական Երուսաղէմ, 1915-ին գիրի առնուած, զոր 1931-ին հրատարակած էր Օրմանեանի քաղուհիացողներէն Մեսրոպ Եպս. Նշանեան, այն ատեն յուսարարապէս Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան:

ՕՐ ՄԷԿ - ՍԻՐԱՔԻԻԶ - ՆԻԻ ԵՈՐՔ - ԹԷԼ ԱՎԻՎ - ԵՐՈՒՍԱՂԷՄ, 19-20 ԱՊՐԻԼ

Նոր Տոմարով Ս. Զատկի պատարագը մատուցի Սիրաբույզի (Ն.Ե.) Ս. Պօղոս Հայ Եկեղեցւոյ մէջ, եկեղեցի մը որ չատոնց ծախու առնուած է Բողոքական յարանուանութենէ մը: Ս. Պօղոս եկեղեցին ունի երեք երգչհոգն - մին՝ վերնատան մէջ - եւ երեքէն ոչ շատ աւելի թիւով երգիչներ զպրաց դասուն մէջ, որ այս առաւօտ կը վայելէր օժանդակութիւնը հեռաւոր վայրէ այցելող երիփասարդուհիի մը: Ներսէ պատերու ձեփը ճաթած է տեղ տեղ: Սարկաւազ չկայ: Եկեղեցւոյ թեմական պատգամաւոր Յարութիւն Բարնակեան, գրեթէ ինձ տարեկից, բուրվառ ի ձեռին կ'օգնէ բեմին վրայ: Կանխաւ ամիսներ առաջ երբ հեռաձայնով հրաւիրեց զիս Զատկի պատարագը մատուցանելու, այս բարի աշխարհականը խոստովանեցաւ որ ինք սարկաւազի բեմին ներուն անտեղեակ է: Կարելի չեղաւ Նիւ Եորքէն Զատկի առթիւ Սիրաբույզ երթալ յանձն առնող սարկաւազ ճարել: Կը նկատեմ որ Յարութիւն պատերթոն ձայնով կ'եղանակէ լոկ Վատուծոյ երկիր պագնացութեքը արուեստակալ թոնով մը: Այդքան, է սորվածը: Այս համեստ ծուխը, որ սեփական եկեղեցի ունենալէն առաջ մի քանի տարի զիս ունէր իր այցելու ծիսակատարներու շարքին, ներկայիս կը վայելէ - որքան որ անոր ժամանակը կ'արտօնէ - հովուական հոգածութիւնը վարդապետի մը որ հովիւն է նաեւ Նիակարա Շուրի եւ Ռաչէսթըրի ծուխերուն, եւ կը բնակի Ռաչէսթըր: *

Պատարագին յաջորդող նախաճաշի համայնական ճոխ սեղանը հազիւ օրհնած եմ: Կը նախընտրեմ հալածուած ճաշակել ձիթաւիղով պատրաստուած ծանօթ պահոց կերակուր մը, իսկ փոքր սիմիթ մը եւ կապոյտ ներկուած զատկական ձու մը ափիս՝ պայուսակովս կը հետեւիմ Յարութիւն Բարնակեանին: Օղակայան հասցենէ առաջ զիս պիտի տանի հիւանդանոցէ տուն նոր վերադարձած ծերունի մայրիկի մը: Մեծ սակայն իրեղէններով խճողուած կառքին մէջ ափիս մէջիները տեղաւորել կը փութամ. զատկական հաւկիթը կը սահի, եւ կառքի բաց դռնէն գլորելով կ'իյնայ դուրս եւ կ'աներեւութանայ կառքին ներքեւ: Փոլոնիացիներու գործաւորական թաղի մը մէջ ապրող հիւանդ հայուհիին կ'այցելենք. կը ջանանք սրտապնդել - ով զիտէ ինչ տեսակ վիրահատութեան ենթարկուած է - Կուտամ Ս. Հայորդութիւն եկեղեցւոյ պատկանող մասնատուփէն, եւ Վարատեա պատուաւ աղօթքը արտասանելու ետք կը մեկնինք:

Օղակայան: Զատկի Կիրակիի այս յետմիջօրէին ցանցաւ եւ ճամբորդները: Տոմսակ ստուգող պաշտօնէլուհին ժպտուն «Հէփի Իսթրը» կը մաղթէ ինձ: Ամերիկեան Արծիւ փոքր սուստնակը մտնելուս, կը նկատեմ որ հորիզոնա-

կան գիծի վրայ երեք փոքր աթոռ միայն ունի, ձախինը միւս երկուքէն անջատուած նեղիկ միջանցքով մը: Նիւ Եորք, Քէնէտի Օղակայանը հասնելուս կը հեռաձայնեմ մեր ծխատէր Տ. Գարեգին Քհնյ. Գասպարեանին, որուն տունը ճաշի հիւր եւ ընտանիքիս մնացեալ երեք անդամները: Կը պատրաստուին ճամբայ ելնելու եւ ինձ հանդիպելու: Տ. Գարեգինին ծիծաղ կը պատահուէ իմ կապոյտ զատկական հաւկիթի կորուստի պատմութիւնս: Այս մեծ օղակայանի տարրեր գիծերու հաւաքավայրերը հանդիպող ներքին կկոցի դեր կատարող օթնպիւս մը կը մտնեմ: Վարիչը եւ ետեւի դասն հակիչը՝ մին կին միւսը այր, երբեմն կը հակասեն իրարու իրենց բարձրաձայն յայտարարութեանց մէջ: Մօտ քսան վայրկեան ոտքի վրայ այս խճողեալ կկոցին մէջ՝ ի վերջոյ կը հասնիմ արտասահման ճամբորդողներու մեր սաւառնակի գիծի մեծ կայանը: Արեւմտաքէն քիչ ետք պիտի ուղեւորուէինք դէպի Թէլ Ավիվ: Հրեաներու մեծ խճողում կայ: Մերոնք եւ միւս հայ ուխտաւոր-

սերը բնականաբար պարտադրեցին իրենց զուգահեռ զգացմանը՝ և Կոմիտասի հիշատակը մեր վրայ կանգնած կը սպասեմ, հակառակ դեպքերին, որ կը շեշտուի քանի արեւը կը խոնարհի, ժամը Յին զրեթէ միաժամանակ կը նշմարեմ իմ մախ կողմէն մօտեցող կառքս - մէջը երէցկիւնս եւ երկու գաւազներս - եւ աջ կողմս կայանի մօտաքը քալելով յառաջացող Տիկ. Էն Տէվէնեանը - իր գաւազներով - ու Նիւ Ճըրզի բնակող ուխտաւորներ Սարգիս Բէքս Խաչիկեան եւ Տիկ. Էն, այլ Տիկ. Աղաւնի Թիւլեան, եւ Տիկ. Կրէյս Փինէնեան:

Մեր լայնանիստ սաւառնակի ճամբորդներու շատը հրեաներ են: Ասոնց համարը - իրաւացի՞ թէ նախապաշարեալ - այն է որ սաւառնակին լուսցարանները անմաքուր կը թողուն գործածելէ ետք: Աջ կողմ պատուհանին կից է Թոմաս Բովս երէցկիւնս է, եւ անոր մախին՝ Կրէյս Փինէնեան - անցեալ աշնան երբ գացին Ս. Էջմիածին Ս. Միւռնի օրհնութեան, երկուքը սենեկակից եղան Երեւան Արմենիա. Հիւրանոց, Կարգ մը ընթերցումներէ ետք ես քիչ մը եւս մշակեցի Աւագ Հինգշաբթի Խաւարման գիշերը Երուսաղէմ Սրբոց Յակոբեանց տաճարին մէջ խօսելիքս: Տասն ժամ անընդհատ պիտի թոյն սաւառնակը մինչեւ Թէյ Ավիվ: Զանացի քնանալ: Լալկան մանչուկ մը կայ քիչ անդին, ծնողքին հետ: Երբ վայրէջքի պահը մօտեցաւ, դիտեցի որ մեր երեսը մաքրելու տաքցուած թամանձեւոց չքաշխեցին ճամբորդներու:

Թէյ Ավիվ, Պէն Կուրիոն օդակայանը լուսաւոր, ընդարձակ եւ տունկերով զարդարուած հաճելի արահ մը ունի: Յետմիջօրէ է արդէն՝ Երկուշաբթի: Մարիամը ինձմէ արագ քալելով, առաւ մեր պայտաւակները՝ երեք կտոր, եւ գտաւ որ պայտաւակներէն մին, բոլորովին նոր, պատուաւք մը ունէր: Ժամանակ առաւ հասուցման պահանջագիրը լեցնելը, որովհետեւ պաշտօնեայ կինը մեզմէ առաջ միայն պահանջողի հարցով երկար զբաղեցաւ:

Մեր եօթ հոգինոց խումբը Երուսաղէմ հասցնելիք օթոպիւսին մէջ բարձրախօսով պատմական եւ այլ տեղեկութիւններ կուտար Արամ Խաչատուրեան՝ թող իմ երբեմնի գծագրութեան նոյնանուն ուսուցիչին: Ծամբան դէպի Երուսաղէմ բարձրացող բլրակողերուն աչքի կը զարնեն ներգաղթած հրեաներուն նորակառոյց բնակարանները, առհասարակ քարէ եւ սպիտակ:

Շուտով Երուսաղէմ ենք, հասանքով արեւմտաքէն: Հին Օսմանեան պարիսպի գոնիքն է: Նոր Դուռ կոչուած մուտքին հանդիպակաց, բանուկ պողոտայի մը վրայ բարձրադիր կանգնած է չորս-հինգ յարկանի դղեակի նմանող Հոռ-մէական Կաթոլիկ Նօթր-Տամ Հիւրանոցը: Այս Հիւանալի հաստատութեան սկզբնաւորութիւնը կապուած է Ֆրանսացի Կաթոլիկ վանականներու նախաձեռնութեան՝ 1884-ին, Ֆրանսացի ուխտաւորներու ապահովութիւնը եւ հանգիստը համապատասխան Շէնքը ծանր կերպով վնասուած է 1948-ի Իսրայէլ-Արաբ ընդհարումներու միջոցին: Նախագումարի եւ անգործածելիութեան երկար լրջանէ մը ետք, 1978-ի Դեկտեմբեր 27-ին Նիւ Եորքի Կաթոլիկ առաջնորդ հանգուցեալ Կարտինալ Քուք յանուն Ն.Ս. Պապին կրկին կ'օրհնէ նորոգուած Հիւրանոցին մատուռը եւ կը յայտարարէ Նօթր-Տամ Կեդրոնը որպէս միջկեղեցական սուրբ վայր մը: Շէնքին ճակատը տանիքին վրայ գոյգ մը բերդակերպ ցած աշտարակներու միջեւ կանգնած է Ս. Մարիամ Աստղածաճնի աչքառու արձանը:

Մարիման ու ես մեր խումբի միասնական ընթերիքէն առաջ քալելով գացինք Ս. Յակոբայ Վանքը Հայոց, Նոր Դուռէն անդին անցնելով Նեղիկ եւ անկիւնաւոր փողոցներէ, ուր կը տեսնենք յուշանուէր վաճառող փոքր խանութներ, ճաշարաններ, վանատուն-դպրոց, եւ ասոնց մէջ թխմուած բնակարաններու դռներ: Հայոց Վանքի դռնէն հագիւ ներս մտած եւ դռնապանը ողջունած, առանց տնտնալու ուղղուեցանք դէպի վանքի հարաւ-արեւ-

պատեալ շէնքը՝ կից՝ Սարտիկեան Թանգարանին - Զամ Թաղ՝ - , ինչպէս նաեւ Լաւոնց եւ միաբանական Թաղի - Պաղչէ Թաղ - հարեան կիւլպէնկեան Մատենադարանի շէնքը: Երեսուն տարի առաջ, երբ Յորդանանեան տիրապետութեան շրջանին Մարիամն ու ես մէկ-երկու գիշեր օթեանեցանք Պաղչէ Թաղ, ժառանգաւորներ տակաւին կը բնակէին եւ կ'ուսանէին ներկայիս Թանգարան կոչուող 1857-ին կառուցուած ճեմարանին եւ անոր կից երկ-յարկանի Զամ Թաղին մէջ: Մեր բախտն էր որ սա պահուն էնթարի հագած միջահասակ մօրուաւոր մը թխաղէմ - հասկցանք որ Վաղարշ Եպիսկոպոսն էր և կը քալէր նոյն ուղղութեամբ: Իմանալով մեր փափաքը հին ճեմարանի բակէն՝ ներս մտնելու, բանալիներու խուրձէ մը գտնեց մետաղեայ դռան մը կղպանքի բանալին,՝ եւ բանալով ցանկապատին դուռը, թոյլ տուաւ մեզ՝ իր հետ մտնել բակին այն մասը ուր իմ ուսանողութեան շրջանին կար ծաղկանոց մը: Այժմ շէնքուցիչ էր տեսարանը. մեր աչքերուն առջեւ էր Թափոնի եւ կոտորած նետուած իրերու կոյտ մը: Անցեալ տարիէն ի վեր Պաղչէ Թաղի ներսը յետագայ տարուող նորոգութիւնները անհրաժեշտ դարձուցած են թափոն եւայլն միբժակայ տեղ մը կուտակելը: Եւ այդ վայրը իմ պատանութեան շրջանի գեղեցիկ ծաղկաստանի հիւսիսային բաժինն էր, մօտը մեր հին փոխ տեսչի սենյակին սենեակին: Կանոնաւոր ածուներու բաժնուած այդ ջուրի կարօտէ՛հողաշերտը ինչ նոսրեղով կը ծաղկեցնէին պարտիզամշակութեան սէրիւմ հետաքրքրութիւն ունեցող ժառանգաւորներ, քաջախիղճամբը տեսնչիւն: Պարտէզին հարաւային թեր, քաղաքի հարաւային պարիսպին նայող՝ ուր ատենին իմ եւ գործակիցներու - այժմ ցրուած Հալկա, Հայաստանի՝ Գանատա - մրցանակի արժանացած ածուները կային, հիմա կը տեսնուի՝ իողճայի, ցամքած կամ վայրի բուսականութեամբ խաթարուած հողամասեր: Այստեղ է որ Վաղարշ Եպիսկոպոս, Սուրբ Յարութեան Տաճարի Հայոց բաժնի տեսուչը, մութէն լոյս պալով իր ազատ ժամերուն, կը մշակէ իր սիրական վարդի տունկերը, կենդանութիւն ներմուծելով այդ անկենդան դարձած անապատին մէջ:

Այս երկու մեծած պարտէզները իրարմէ անջատող մեծկակ բակին կը նայի ճեմարանի շէնքին մուտքը, շէնք մը գոր Մ. Օրմանեան իր վերը յիշուած գրքին մէջ կը նկարագրէ որպէս «գմբէթայարկ, վայելուչ եւ բարձր», որուն սրահը «կատարելապէս լուսաւոր է»: Մինչեւ կառուցումը Ալեքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի շէնքին, վանքի մայր մուտքի հանդիպակաց Հողին վրայ, ճեմարանը մէկ դարէ աւելի ծառայած էր՝ հարիւրաւոր ուսանողներու համար որպէս դասարան, սերտարան եւ հանդիսաւ-վայր: Կը յիշեմ թատերական ներկայացումները գորս ժառանգաւորներ բեմադրած են այս շէնքի խաչածեւ եւ բեմ չունեցող սրահին մէջ: Բեմը իւրաքանչիւր ներկայացման առիթով կը յարդարուէր Զամ Թաղի պահեստարանէն բխուած տախտակէ հաստատուն սեղաններով: Այժմ լքուած, ջարդուած պատուհաններով, անգործածելի վիճակի մէջ է Թանգարան ըլլալու սահմանուած այս գեղեցիկ շէնքը: Ծմլուած սրտով կը մաղթեմ որ վերստին կենդանանայ այս պատկառելի կառոյցը եւ գտնէ իրեն յարմար նոր կոչում մը:

Վերադարձի ճամբուն վրայ մի քանի քայլափոխ տնդին մեղ կը հըստուրէ Գալուստ կիւլպէնկեան Մատենադարանը, քարաշէն երկյարկանի անջաւկանդնող շէնք մը, կառուցուած 1930ական թուականներուն սկիզբու Դուրսէն փակ երեւցող երկաթի՝ դուռը կը հրեմ: Բաց է Ենթան է հաւատարիմ քարտուղար եւ հակիչ Սահակ Գալայճեանը, Պատրիարքարանին յագմակող-մանի ծառայութիւններ մատուցանող ազնիւ հայորդին: Սահակ տաւանած

եակներէ ի վեր կը հաւաքէ եւ պարտաւարդ ու կը դատաւարէ ուս ու պատգամ
հրատարակութիւններ, ճոխացնելով Մատենադարանի հաւաքածուն։ Այստեղ
կը հանդիպինք Ամերիկայէն մեզի ծանօթ հայագէտ թէ՛ն ոչ-Հայ Օր. Ռո-
պերթա Ըրուինին, որ զբաղած է պրպտումով։ Կրկին այցելելու յոյս յայտ-
նելով հրաժեշտ կ'առնեմ Սահակ Գալայճեանէն, եւ վաճառի մեծ բակին ուղ-
ղութեամբ քալելով, պատահմամբ կը ծանօթանամ Միտրանութեան նորադոյն
անդամներէն ապիտակամօրուս եւ ժպտուն ու բարի դէմք ունեցող Ռադմիկ
Վրդ. Պօղոսեանին։ Ան կը յայտնէ որ ինք աւագ Թարգմանն է - աւագ
մը վանական ուստիկանապետ։ Ազնուարար կ'ընկերանայ երկցկնոջս եւ ինձ,
մեր հետ միասին քայլելով դէպի Նոթր-Ծամ։ Հոն մեր խումբի անդամ-
ները կը տեղաւորուին բնիկի բնիկ սեղանին շուրջ։ Հայր Ռադմիկ լոյսւրին
կը ծանօթանայ, բարի պայուստ կը մայթէ եւ շուտով կը վերադառնայ վանք։

ՕՐ ԵՐԿՈՒ - 21 ԱՊՐԻԼ

Առաւօտուն քոլոր եօթն Հայ ուխտաւորներս կը բազմինք հիւրանոցի կա-
մարակապ ճաշարահին մեզի յատկացուած սեղանին շուրջ։ Նեղ եւ երկար
սրահ մը կը թուի ըլլալ սեղանատան այս բաժինը։ Մի քանի քայլ անդին,
իրարու կից երկար սեղաններու վրայ սփռուած է նախաճաշը պէսպիսուն,
առատ, տաք եւ պաղ ուտելիքներով։ Հիւրերը պէտք է մօտենան, լեցնեն
իրենց նախաօրածը պնակի եւ բաժակի մէջ վերադառնան աթոռ եւ վայելեն։
Ջափ չկայ որկրամոլին համար։ Միայն սուրճ կամ թէյ խմելու պարագային,
մատուցողն է որ կը բերէ փարջը, մօտենալով սեղանին։ Բազմութիւնը հիւ-
րերու մեծ է, տրուած ըլլալով որ ի միջի այլոց Աւստրալիայէն եկած է Յոյն
ուխտաւորներու մի քիչ աղմկայարոյց խումբ մը։

Մատուցողներու եւ հիւրանոցի պաշտօնեաներու հասարակաց լեզուն Արա-
բերէնն է։ Կան մի քանի հայ պաշտօնեաներ, որոնց շարքին երիտասարդ Երու-
սաղէմացի Գէորգ Ալէմեանը, որ ունի վարչական-ուսուցողական պաշտօն
մը։ Կը ծանօթանայ մեզի։ Ոստակցութենէն յայտնի կ'ըլլայ որ իր զաւակ-
ները կը յաճախեն Հայոց Վանքի Սրբոց Թարգմանչաց մանկապարտէզը։

Արամ Ուշատուրեան՝ մեր ուղեցոյցը, հոս է կանուխ, երիտասարդ
Արար Գրիստոնեայ շարժավարի մը հետ։ Փոքր օթոպիստով ուղղուեցանք
հիւսիս, դէպի Զիթենեաց Լեռ։ Բարձունքի մը վրայ, ըլրակողէն դէպի
հարաւ նայելով, ուխտաւորի աչքին Երուսաղէմի հին պարիսպը եզերող
ձորերէն գատ յատակ կ'երևին Օմարի Մզկիթը իր մէծ գմբէթով, եւ
Քրիստոնէական մի քանի սրբավայրերու գմբէթներն ու տանիքները։ Մեր
ոտքերուն մօտ նեղ արահետներու եզերքը հողաշերտերու վրայ կը տեսնուին
կակաչներ, որոնք կը յիշեցնեն ծննդավայրիս Հալէպի տարուան այս
չրջանի գունազնդ արտերը։ Այցելեցինք Քրիստոսի Համբարձման վայրը
- շատոնց իսլամներու սեփականութիւն դարձած-, Հայր Մերի Կաթողիկ եկե-
ղիին, որոս պատկերուն վրայ համալսափ խճանկարներով Հայր Միւր պատկե-
րացուած է շատ մը լեզուներով, որոնց շարքին սխալներ պարունակող Հայե-
րէնով։ Գացինք նաեւ Մարիամ Մագդաղենացիի եկեղեցին, նկարազարդ
Ապա դժուարաւ կրցանք արտօնութիւն առնել նորոգութիւն կատարող
Արար դոնոսպանէ մը Ռուսական ընդարձակ վանքը մտնելու։ Մայրապետ-
ներ կան այստեղ։ Ըլրակողէն դէպի վար քալելով փոշոտ եւ քարքարուտ
նեղ ճամբաներէ, հասանք Գեթսեմանիի Զորին մէջ Ա. Մարիամ Աստուա-
տունքով Յոյն Օրթոդոքսներն ու Հայերը։ Տաճարի մուտքին մօտ Հայ Պատ-
րիարքարանը ունի արաբ-իսրայէլեան ընդհարումներու առաջին զինադու-

լին նախ չի նուաճ յուշարձան-զանգակատուն մը: Տաճարը պատուհան չունի. մոմի եւ կանթեղի լոյսով է որ կը տեսնենք քարէ լայն աստիճանները դէպի վար առաջնորդող: Յատակին աջ կողմն է Մարիամ Աստուածածնի պերեզմանը, որու յարդարանքը հաւասար իրաւունքով պատասխանատուութիւնն է Հայոց եւ Յոյներուն: Որոշ անկիւններ կան պատարագի սեղաններ որոնք Հայոց հետեւորդ Ասորիներու եւ Ղպտիներու կողմէ կը գործածուին: Գերեզմանի մուտքին, լայն աստանի ձախ պատին վրայ կախուած են համալսարանի փոքր սրահակարներ որոնց վրայ կը կարդանք նկարիչին անունը՝ Արամ Խաչատուրեան, մեծ հայրը մեր խումբի ուղեցոյցին: Կրտսեր Արամ Խաչատուրեանը ինքն իրեն պարտականութիւն կը համարէ ի դաստիարակութիւն շրջապատող իր խումբին, բարձրաձայն Անգլերէն ընթերցում ընել Ս. Գրքէն, ընթերցում՝ որ իր դատողութեամբ նշանակալից կը դարձնէ այցելութեան վայրը: Արամի այս հետեւողական աշխատանքը այնքան ալ հնչող չէ, տրուած ըլլալով որ միաժամանակ ուրիշ գրօսաչըջիկներու խումբեր կ'այցելեն նոյն վայրերը, երբեմն պատճառ դառնալով սպասումի, եւ աւելի յաճախ աղմուկ յարուցանելով: Ս. Աստուածածնի պերեզմանի սեղանին վրայ Հայեր ամէն օր կը մատուցանեն Ս. Պատարագ:

Այս բոլոր սրբավայրերու մուտքին մօտ անխուսափելի են դուռնաւոր քարտ, յուշանուէր, զովացուցիչ շրջիկ վաճառող այրեր ամէն տարիքի: Կը մօտենան, ապրանքը կը գովաբանեն եւ համարձակ կերպով կ'առաջարկեն ծախել:

Օթոպիւսը այժմ կ'ուղղուի դէպի հարաւ՝ Բեթղէմ: Հինգ մղոն է հեռաւորութիւնը: Մեր պատանութեան, երկար ճամբայ մը կը համարենք այդ: Ս. Յակոբայ վանքի միաբաններէն ոմանք ալ կը հաւատային որ Երուսաղէմէն Բեթղէմէն Հայոց վանքը «աքսորուիլ» իրապէս կազդուրիչ օգափոխութիւն էր: Այժմ ճամբու եզրերի երբեմնի պարապ հողերը՝ չէնքերով լցնուած են: Ոմանք՝ փոքր վիլաններ, նախապէս բարեկեցիկ Արարիներու կը պատկանէին:

Հայոց Պատրիարքարանին պատկանող Պարոնտէրի այգին եւ արարներու յարգած Ռաֆէլի գերեզմանը թողելով մեր աջ կողմը, կը մտնենք Ս. Մենդեան Տաճարի հրապարակը: Մեծ քարերով նկղցուած մուտքէն - որպէսզի իսլամներ չկարենային իրենց ուղտերը կամ ջորիները մտցնել Քրիստոնեայ սրբավայրէն ներս - մեր գլուխը վար հակած կը մտնենք ներս եւ յաջորդաբար կ'այցելենք Լատինական եկեղեցին կոկիկ, Պաղիթիքային մաս կազմող Յունական եկեղեցին - ծերացած -, եւ այս երկուքին միջեւ տեղ գտած հայկական փոքր բաժինը իր երկու պատարագի սեղաններով: Սեւագգեստ փոքրահասակ ու նիհարակազմ Հայ աշխատաւոր միաբան մը սուր յիշողութեամբ կը ճանչնայ զիս եւ կուտայ աշխարհական անունս: Կ'իջնենք Ս. Մենդեան եւ Մաուրի այրը, որ խճողուած է այլ եւ այլ գրօսաչըջիկներով: Լուսանկարչական գործիքները կը բանին:

Վերջապէս՝ այս սրբավայրի տանիքի յարկին վրայ գտնուող Հայ վանատունը պէտք է երթանք: Այնտեղ է որ կը բնակի եւ սրբավայրին մէջ Հայ ազգի իրաւունքներուն պահպանութիւն կ'ընէ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան պատկանող տարեց Հայր Ոսկի Որդիքեանը: Այդ իրաւունքներէն զխաւորն է Քրիստոսի Ս. Մենդեան այրին մէջ Հայոց ամենօրեայ պատարագի մատուցումը: Հարկ եղաւ ձայն տալ քանիցս մինչեւ որ Հայր Ոսկի, որ թերեւ կը մրափէր կէսօրուան տաքին, ելաւ եւ բացաւ դուռը սանդուխին: Տեսչարանը համեստ է: Հոս է որ ատենօք Ս. Մենդեան Տօնին առթիւ Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեան կանչեց զիս - Ժառանգաւորաց Վարժարանի կրտսերագոյն աշակերտս - եւ տես-

չարանի փայտէ՝ դռան դուռը կանգնեցնելով, քանակով մը հասակս նշեց փայտին վրայ: Զորա տարի հազիւ վայելեցինք Գուշակեան Պատրիարքը: 1939-ի Փետրուարի տրտում օր մը ան յանկարծամահ՝ վախճանեցաւ, այնպիսի ժամանակ մը երբ մեր նորընծայ սարկաւազներուս դասարանը Ընծա-յարանի առաջին տարելըջանը կը բոլորէր:

Հայր Ռսկի կը խօսի իր պաշտօնի դժուարութեանց մասին: Պատ-րիարքարանէն որոշուած սահմանափակ պիւտճէն պէտք է մատակարարէ, իր եւ ժամարար քահանաներու, լուսարարի եւ այլ ծառայողներու համար: Պատրիարքարանի՝ զրպանի՝ օրացոյցը՝ այս տարուան համար՝ յանուանէ կը յիշէ երկու քահանաներ որպէս ժամարար Բեթղեհէմի, սակայն չտեսանք զանոնք: Տեսչարանին կից արեւոտ բակին մէջ կը տեսնուէին մի քանի բաց դռներ եւ երթեւեկող կատուներ, սակայն չհամարձակեցանք մօտենալ այդ դռներուն: Հայր Ռսկի ականարկեց նաեւ քաղաքական անհանդարտութեան: Բեթղեհէմ Արարական փոքր քաղաք մըն է, Խորայէլեան գրաւման տակ: Իրօք, Հայոց վանատան տանիքի ցած պատէն անդին ականարկ մը կը բաւէր նշմարելու գինուած Խորայէլեան գինուոր մը, որ հանդիպակաց շէնքի տա-նիքին եզերքը դիրք բռնած, ձեռքը հրացանի մը վրայ կը հակէր հրապարակի եւ մօտակայքի մարդոց շարժումներուն:

Դէպի Երուսաղէմ վերադարձի ճամբուն վրայ Բեթղեհէմէն դուրս չելած, մեր օթոպիւսը կանգ առաւ Արամ Քաջատուրեանին ծանօթ յուշանուէրնե-րու ընդարձակ խանութի մը առջեւ: Վաճառատունը իր զանազան բաժին-ներն ունի, լաթեղէնի, սատափի, փայտեղէնի, մետաղեայ կամ կաւէ իրե-ղէններու վերաբերեալ: Անշուշտ մեր խումբի կիները աւելի լաւ գիտեն թէ ինչ կ'ուզեն գնել եւ որո՞ւ համար: Ըստ իս, այսպէս կոշուած զեղ-չեալ գիները այնքան ալ հրապուրիչ չեն:

Շատ քալած ենք այսօր: Գոհ ենք որ Նօթր-Տամ կը վերադառնանք, կէսօր-ուան ճաշի սովորական ժամէն մէկ կամ աւելի ժամ ուշ: Պատճառը՝ Տ. Թոր-գոմ Պատրիարք Մանուկեան կարգադրած է զալ ժամը 2-ին ճաշելու իր Ամե-րիկահայ նախկին հօտի այս 7 հոգինոց խումբին հետ: Սեղանատունը միայն մենք ենք, երբ ժամը 2-ին Քիւրիս Քյասիք կառքով մը կը ժամանէ Պատրիարք Սրբազանը: Անոր կ'ընկերանայ Աւագ Թարգման Ռազմիկ Վրդ. Պօղոսեան: Շարժավարը հայ մըն է: Կառքին վրայ կը ծածանի պատ-րիարքարանի փոքր դրօշը:

Թորգոմ Պատրիարք-դէմքով աւելի լաւ երեւցաւ մեզի քան ինչ որ կը թուէր ըլլալ անցեալ Սեպտեմբերին իր Ամերիկա այցելութեան օրերուն: Դէմքին վրայ չկար խոժոռութիւնը որ յայտնի էր Ս. Էլմիածին 1991-ի միւլտնօրէնէ-քի շարժանկարներուն մէջ, ուր Պատրիարք Սրբազանը Ամենայն Հա-յոց Տ. Վազգէն Կաթողիկոսին զրեթէ կից կանգնած էր: Այսօրուան ճաշին Ամերիկահայ սեղանակիցները առանց բացառութեան քառորդ դարէ աւե-լի երկսր ծանօթութիւն ունեցած էին Սրբազան Հօր հետ, ամէն մէկը իր ծիսական եկեղեցիին մէջ ծառայութեան նուիրուած այս կամ այն՝ հանգա-մանքով: Ժաշի ընթացքին խօսակցութիւնը անցաւ առանց մասնաւոր խնդիր-ներու նկատուման: Պատրիարքը երբ կը պատրաստուէր վանք վերադառ-նալու, յոյս յայտնեց որ այս երեկոյ ժառանգաւորաց Վարժարանի սրահ-ներէն մէկուն մէջ տրուելիք դասախօսութեան մը առթիւ դարձեալ կը տես-նէ մեզ:

Պատրիարք Սրբազանին հաւանութեամբ՝ անոր դէպի Պատրիարքարան վերադարձին ընկերացայ նոյն կառքին մէջ, հետս տանելով Նիւ Եորքա-րեակ արուեստագէտ Սիմոն Սամսոնեանի մէկ նկարը, զոր Սամսոնեանի աներձագ Նուպար Քիւփէլեան՝ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդի

Հայերէն գործառնութեանց վարչական օգնական, խնդրած էր ինձմէ Պատրիարքին յանձնել որպէս արուեստագէտին նուէրը: Այդ նկարէն զատ կար նաեւ կղպուած փոքր պայուսակ մը, առաջնորդարանէն եւ անհատներէ Պատրիարքին ուղղուած պաշտօնական եւ անձնական թուղթեր պարունակող: Նկարը եւ պայուսակը տարի ուղղակի Պատրիարքի աշխատասենեակը: Սրբազանը խօսեցաւ ներկայիս վանք գտնուող սակաւաթիւ վնդարաւորներու անբաւականութեան մասին: Յայտնեց մտահոգութիւնը ժառանգաւորաց Վարժարանի ներկայ կարգապահական եւ ուսումնական կացութեան մասին: Եիշեց պարագայ մը թէ ինչպէս վերջերս նուիրատուութեան մը շնորհիւ ժառանգաւորաց Վարժարանին համար ապահովեց նոր դաշնամուր մը, որու սղեղներէն ոմանք մի քանի օր ետք կոտորուեցան քանդումի վարժ երկրէ մը եկած ուսանողներու ձեռքերով:

Սրբազանին յայտնեցի Կիւլպէնեկեան Մատենադարանին մէջ պրպտում կատարելու փափաքս: Պատրիարքը կանչեց հեռաձայնով Հայր Վանիկ. Մանկասարանը, որպէսզի ինձ համար բանայ Կիւլպէնեկեան Մատենադարանը, քանի որ այդ պահուն Մատենադարանի քարտուղար Սահակ Գալայճեանը զբաղած էր այլուր: Հայր Վանիկ, նիհարակազմ եւ մեղմախօս երիտասարդ վարդապետ մը, իմ խնդրանքիս վրայ զիս նախ տարաւ՝ Տաւրիթ Արքեպս. Սահակեանի - լուսարարապետ - յարկաբաժինը, ուր հարկէ բարձրանալ աստիճաններով: Եարկաբաժինէն կարելի է նայել վանքի մեծ բակին վրայ: Եիշեցի թէ այստեղ հանդիպած էի նախկին լուսարարապետ Տ. Հայրիկ Արքեպս. Արսլանեանին 1980-ի ամրան համագումարին: Դաւիթ Սրբազան, վանքէն հեռու այլևայլ թեմական-հովուական սլաշտօններ վարած, լուսարարապետ ընտրուեցաւ-Թորգոմ Պատրիարքի գահակալութենէն ետք երբ նախորդ լուսարարապետ Տ. Գարեգին Սրբազան Գալանճեան Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրուելով հեռացաւ Երուսաղէմէն: Առաջին անգամն էր որ կը հանդիպէի Դաւիթ Սրբազանին: Իր մասին լաւ վկայութիւն լսած էի միշտ: Սա պահուն ձեռքն ունէր ֆրանսերէն աստուածաբանական նոր գիրք մը, զոր Սրբազանին ղրկած էր Փարիզի Ս. Յովհաննէս Եկեղեցին պաշտօնավարող Ժիրայր Մ. Վրդ. Թաչճեան: Դաւիթ Սրբազան երախտագիտական եւ հիացական խօսքով յիշեց իր ձեռնադրիչ լուսահոգի Տիրան Արքեպս. Ներսոյեանը, որ իր Երուսաղէմի ընտրեալ պատրիարքի հանգամանքով 1957-ին զինք ձեռնադրեց կուսակրօն քահանայ: Եիշեց նաեւ իր օծակից Արիս Եպս. Շիրվանեանը - ներկայիս հովիւ Սան Ֆրանսիսկոյի Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ - որուն անձնապէս դիմած է վերադառնալ եւ գործել Վանքին մէջ: Դաւիթ Սրբազան հաստատեց որ աւագ Հինգշաբթի գիշերը պիտի քարոզեմ եւ Դարաթ երեկոյ Զատիկ ձրագալոյցի պատարագը պիտի մատուցանեմ Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ: Երբ կը մեկնէի Դաւիթ Սրբազան ինձ տուաւ օրինակ մը մեքենագրուած ժամանակացոյցէն Աւագ Ծաթթուան:

Երբ հասանք Կիւլպէնեկեան Մատենադարան, Սահակ Գալայճեան հոն էր արդէն: Սակայն տրուած ըլլալով ժամանակի սղութիւնը, նախորդ դարու Սիոնի հագիւ երկու հատորներ կրցայ քննել: Պրպտումիս նպատակն է ստուգել թէ Ամերիկահայոց անդրանիկ հոգեւոր հովիւ Յովսէփ Մ. Վրդ. Սարաճեան իրապէս Երուսաղէմ ժառանգաւորաց Վարժարանի ուսանող եղած է. ինչպէս Մ. Փորթուգալեան գրած է Սարաճեանի մահուան առթիւ:

Գալելով վերադարձայ Նօթր-Տան: Եայտնի չէ թէ ուր են մեր մնացեալ հայ ուխտաւորները: 25 վայրկեան ետք եկաւ Մարիամը, եւ յայտնեց թէ շուկային մէջ ուր գացած էին բոլորը, սխալմամբ անջատուած է խումբէն եւ

կորսնցուցած է ընկերներուն հետքը: Մնացեալները ուշ հասան ընթրիքի: Մեր խումբի օթոպիւսը մեզ հասցուց մինչև Դաւթի Բերդի մերձակայ ոստիկանատունը: Քաղցինք այդ կէտէն, նկղիկ փողոցին մէջ զգուշանալով մէկ ուղղութեամբ գացող ինքնաշարժերէն: Նիւ Եորքէն վերջերս Նրուսադէմ այցելութեան եկած Նախկոպոսական Կանոնիկոս Տօքթ. Ծ. Բապրթ Բայթ, բարեկամ Թորգոմ Սրբազանին, սկսած էր արդէն սահիկներով դասախօսութիւնը Մարիամ եւ Յիսուս Արուեստի Մէջ նիւթին շուրջ: Ժամանակ մը ետք մութին, իմ յոգնածութեանս եւ դասախօսի միասպաղով թոնէն քունս եկաւ պահ մը: Թորգոմ Սրբազան իր փակման խօսքին մէջ ականարկեց Առաջնորդարանի կողմէ իրաժակ Նպս. Պարսամեանի արտօնութեամբ հրատարակուած իմ երկկեզու զրօրյկիս՝ Դար մը Հայ եւ Նախկոպոսական Եկեղեցական Շփումներու Ամերիկայի Միացեալ Նահանգաց Մէջ, որմէ 20 օրինակ հետս բերած եւ մի քանի ժամ առաջ յանձնած էի Պատրիարքին: Գրօրյկիս մէջ յիշած էի Կանոնիկոս Բայթի ինձ տուած օժանդակութիւնը իր Նիւ Եորքի Նախկոպոսական Աստուածարանական Ընտանի դասախօսի հանգամանքով: Արդէն իսկ զրօրյկէն օրինակներ մուտքին մօտ ծախու զրուած են, ի նպաստ ժառանգաւորացին:

Պատրիարք Սրբազանը ի վերջ իր գնահատական խօսքին Հայկական Վարդապետական յանջախաչ մը նուիրեց Կանոնիկոս Բայթին, զայն կողջելով Վարդապետ: Յայտնի էր որ այս անակնկալ նուէրին եւ տիտղոսին համար Կանոնիկոս Բայթ չափազանց ուրախացաւ:

Ընդունելութեան միջոցին Մարիամն ու ես առիթ ունեցանք ողջունելու Նիւ Եորքի Ս. Ներսէս Ընտանիին մէջ մինչև անցեալ տարւոյ ինձ աշակերտած չրջանաւարտ Մայքըլ Քլէյնշանը եւ Բապրթի Պօյաճեանը, որոնք աշունէն ի վեր իրենց Հայերէնն ու ծիսագիտութիւնը կը զարգացնեն Վանքին մէջ: Ասոնց ընկերացած են վերջերս իրենց կիները: Զոյգերը կը բնակին Վանքէն դուրս: Զատիկէն անմիջապէս ետք կը վերադառնան Ամերիկա, ուր շուտով կը դառնան հայր եւ մայր:

ՕՐ 2ՈՐՍ - 28 ԱՊՐԻԼ, ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Սրբոց Յակոբեանց մայր տաճարի առօրեայ ժամապաշտութեանց ծանօթ որեւէ Հայ կրնայ անվարան ըսել թէ Աւագ Հինգշաբթին տարուան այն օրն է, երբ ամենամեծ թիւով ժամեր կը յատկացուին տաճարին մէջ կամ մօտակայքը տեղի ունեցող արարողութեանց: Կը նայիմ Լուսարարապետ Դաւիթ Արքեպս. Սահակեանի պատրաստած ժամանակացոյցին. անոր մէջ Ս. Զատիկի կիրակիին յատկացուած է 7 տող, իսկ Աւագ Հինգշաբթին՝ 11 տող: Առաւօտուն՝ ժամերգութիւնը կը սկսի ժամը 7-ին: Երեկոյեան՝ Նաւարման Կարգը կը սկսի ժամը 7-ին եւ կրնայ տեւել մինչև կէս գիշերէն ետք: Այսօր երեք անգամ քաղելով երթուղարձ ըրի դէպի Սրբոց Յակոբեանց տաճարը: Երկրորդին - Ոտնւռայ - եւ երրորդին - Նաւարում - Մարիամ ուղեկցեցաւ ինձ:

Առաւօտուն՝ տաճարէն ներս առանց տնտնալու կ'երթամ ուղղակի Հիւսիսակողմը մուտք ունեցող Ս. Ստեփանոսի մատուռը, որ աւանդատունն է: Առաջին ծանօթ անձը որուն կը հանդիպիմ այնտեղ Կիւրեղ Նպս. Գաբրիէանն է, զոր կը յիշեմ 1930-ական տարիներէն երբ ի հօրէ որբացեալ Գեղամն էր, եւ կրտսեր եղբոր Միթիարին հետ որպէս աշակերտ Սրբոց Թարգմանչաց Նախակրթարանին, երբեմն կը մասնակցէր Հանդիսաւոր Թափօրներու, ինչպէս Ս. Յարութեան տաճարին մէջ Մեծ Պահոց Դատաւորի Կիրակին:

Այժմ կիւրեպ Եպս. նոյն Թարգմանչաց նախակրթարանի եւ երկրորդական բաժնի տեսուչն է, նախորդ պատրիարքի շրջանէն ի վեր: Երբ նշմարեցի. կիւրեղ Սրբազանը, ան նստած էր կիսամութ մատուռի. դէպի տաճարին ատենանը նայող բարձրադիր ամպիոնի սանդուխներուն ոտքը, փոքր աթոռի մը վրայ: Իսկոյն ելաւ, ողջունեց ջերմագին եւ իր աթոռը ինձ հրամայուց: Գովեստ շոայլելու վարժ է կիւրեղ Սրբազան: Յայտնեցի ժառանգաւորաց հին փակուած շէնքը տեսած ըլլալս, ափսոսացի այդ գեղեցիկ կառոյցին լքուած ըլլալը: Դիտողութիւնս առիթ տուաւ Սրբազանին ըսելու թէ իր թկադրութիւնը եղած է այդ շէնքը վերածելու եկեղեցիի՝ յանուն Սրբոց Վարդանանց: Կիւրեղ Սրբազան աւելցուց որ աւագ Շարթու երգեցողութիւններու կարեւոր մէկ մասը կ'ընեն Սրբոց Թարգմանչաց զպրոցի մանչերը, զորս ինք մարզած է:

Կիւրեղ Սրբազանին հետ խօսակցութիւնս ընհատուեցաւ երբ աւանդատուն մտաւ Լուսարարապետ Դաւիթ Սրբազան: Ողջունեցի զայն: Ի պատասխան հարցումիս Դաւիթ Սրբազան զիս նշանակեց ձախակողման դասուն: Առանց մենտորի, գացի եւ անցնելով լայնանիստ չորս քառակուսի սիւներու զոյացուցած ատենանի արեւելեան եզերքէն մտայ դասի երկաթեայ վանդակի բացուածքէն ու կանգնեցայ «Կուստինայի ընտրի յախճապակիներով պատած, մարդաչափ բարձրութեամբ» - ինչպէս կը նկարագրէ Մ. Օրմանեան Հայկական Երուսաղէմին մէջ, ձախակողմեան դասու պատին կից: Այս էր ժամապաշտական դասս Ընծայարանի սարկաւազութեանս շրջանին՝ 1938-1941, եւ այս դասին մէջ պիտի մասնակցիմ աւագ Շարթու մնացեալ ժամապաշտութեանց: Գլխուս վերեւ, պատին վրայ իրարու կից մեծ նկարներն են Հայ Եկեղեցւոյ Ոսկեդարու եւ զայն կանխող շրջանի հայրապետներուն:

Դպիրներ եւ ուրարակիրներ դասի կեդրոնը հաւաքուած երգեցին - առանց որեւէ նուագարանի օժանդակութեան - Կոմիտաս Վարդապետի դաշնաւորած պատարագը, ղեկավարութեամբ Սասուն ծնած երիտասարդ փոքրահասակ Գուսան Վրդ. Ալճալեանի: Հայր Գուսան գեղեցիկ ձայն ունի: Պատարագիչն է Դաւիթ Սրբազան, որ տեղ տեղ իր երգած բաժիններով կը յիշեցնէ ներկայ Պատրիարք Թորգոմ Սրբազանի ոճը: Բարսեղ Կեսարացի Հայրապետի խրատը հայերէն աշխարհաբար կարդաց Դաւիթ Սրբազան, յստակ առդանութեամբ: Բեմին վրայ սպասարկողներու շարքին են Ամբրիկայի Ս. Ներսէս Դպրեվանքի՝ շրջանաւարտ՝ մոմակալ եւ քրոցակիր Րապրթ Գոյանեան, եւ վերաբերում կատարող Մայքըլ Քէյիշեան:

Ս. Յակոբայ տաճարը այսօր ցուրտ է եւ խոնաւ: Ամիսներու - եթէ ոչ տարիներու - ծովէն մրոտած են կամարներն ու նկարները: Ելեկտրականութիւն մուտք չէ գործած այս սրբատեղիէն ներս: Ժողովուրդը թիւով նստ է: Նստարան կամ աթոռ չկայ տաճարին մէջ, ոչ իսկ դասին մէջ, ի բաց առեալ Պատրիարքին գահը: Հարաւ-արեւելեան սիւնին առջեւ սեւազգեստ, երիտասարդ երեւցող բարեպաշտուհի մը կանգնած էր: Յետոյ իմացանք որ ան միաբանութեան միակ մայրապետն է, Արեւմտեան Եւրոպայէն տեղափոխուելով ուխտ կատարած եւ քօղ առած՝ Լիբանանցի Սօնիա Վանէրեանը: Ս. Հաղորդութիւն ստանալիք ծերունի կին մը գաւազանի յենած ձախ կողմէն մտաւ դաս, եւ գաւազանը ինձ յանձնելով քալեց մինչեւ ընթերցեալ ծանօթի մը աջակցութեամբ:

Մարիամը որոշած էր առաւօտուն մեր խումբի մնացեալ անդամներուն հետ այցելել Թէլ Ավիվ: Պատարագէն ետք ժառանգաւորաց հսկիչ Հայր Գուսանէն կրցայ ստանալ մի քանի թերթ թուղթ որու պէտք ունէի այս գիշեր

խօսելիքին համար: Հիւրանոցը՝ մահճակալիս քովի քարաշէն պատուհանին լայն յատակը զործածելով իբր յենարան, պատրաստածն քարոզը արտագրեցի հինգ թերթի վրայ: Նախ քան կէսօրուան ճաշը առիթ գտայ փոստ-քարտեր գրելու, սակայն ասոնց համար նամակադրոշմ գնելը մնաց երեկոյեան, երբ հիւրանոցի որոշ մէկ կրպակը կը բացուի սահմանափակ ժամով:

Յետմիջօրէին՝ Ռոնլուայ, Աւագ Թարգման Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, տրցակ մը տոմսակ ձեռքին, կը սպասէ Պատրիարքարանի սանդուղներու մուտքին, տաճարի արտաքին գաւիթը: Մեր խումբի անդամներուն տոմս պիտի բաշխէր, որպէսզի դասին մէջ մասնաւոր դրու. Եւ աթոռ ատկացուէ իւրաքանչիւրիս: Մի քիչ յապաղած ենք: Հրաւիրեալ հիւրեր չունէին, հոգեւորական թէ աշխարհական, գրաւած են աթոռները գրեթէ ամբողջութեամբ: Սեւ վերարկու հագած ըլլալ կը դիւրացնէ աշակողմեան դասին մէջ աթոռներու երկրորդ շարքին վրայ տեղ գտնել: Աթոռները շարուած են բնմին ուղղահայեաց դիրքով: Տիար Գէորգ Հինգլեան՝ Պատրիարքարանի Ս. Տեղեաց Դիւանի միակ աշխարհական պաշտօնեան, կը հսկէ կարգապահութեան դասին մէջ: Ի հարկին նշան կ'ընէ անտեղի երթնել կամ խնդում խափանելու: Շարժանկար-վիտէօ առնողներ իրենց լոյսերով եւ այլ կազմածներով աչքի կը զարնեն: Նստած տեղէն նշմարեցի ձախակողմեան դասին մէջ ինձ դէմ յանդիման նստած Նիւ Նորքցի Կանոնիկոս Րապրթ Րայթը՝ իր կողքին մի քանի այլ Անկլիքան կղերականներ: Թորոքմ Պատրիարք նախագահեց եւ ծնկաչոք լուաց միարանութեան աւագ անդամներու ոտները: Յիսուս մէկ տարի առաջ Ռոնլուայի պահուն որպէս առնթման րակայ զոյգ սարկաւազներէն մին, շքեղ շապիկ հագած կեցած էի օրուան հիւր նախագահ Արտաւազդ Արքեպս. Սիւրմէեանի աթոռին ետեւ, դէմքս ժողովուրդին: Լուսանկարիչ մը այդ առթիւ առած էր բնմի խմբանկարը եւ օրինակ մը ինձ զրկելու շնորհն ըրած էր: 1941-ի ամառը վանքը թողելէս ետք դէպի Հալէպ վերադարձիս ճամբուն վրայ գիշեր մը Պէյրութ մնալ հարկադրուեցայ: Ձեռմ յիշեր թէ որուն ցոյց տուի հոն Երուսաղէմի այդ տարուան Ռոնլուայի մեծ նկարս: Հալէպ հասնելէս հազիւ մէկ ամիս անց՝ Արտաւազդ Սրբազանէն խնդրանք հասաւ ինձ, Ռոնլուայի լուսանկարը - որու կեդրոնական փառաւոր զարդն էր ինք - զրկել իրեն Պէյրութի Առաջնորդարանը ուր վերջերս Հալէպէն փոխադրուած էր իբր Հիւանանի Հայոց Առաջնորդ: Երթման բարով, անվերադարձ նկար - յիշատակ: 1950-ի Ռոնլուայի նկարը, որու կեդրոնը իբր նախագահ կը տեսնուէր Ամերիկայի Առաջնորդ Տիրան Արքեպս. Ներսոյեան, մասնաւոր առաքելութեամբ մը ժընեւէն Երուսաղէմ այցելութեան առթիւ, աւելի բախտաւոր եղաւ, համարաւոր Նէշնըլ Ժէոկրաֆիք ամսագրին մէջ գունաւոր լոյս տեսնելով տարին լրանալէն առաջ:

Արարողութեան վերջանալուն մօտ Երուսաղէմի մէջ պաշտօնավարող Անկլիքան բարձրաստիճան կղերական մը զլիւռն խոյր հագած բնձ ելաւ եւ Անգլերէն կարգաց Յովհաննու Աւետարանի այն հատուածը որով կը փակուի Ռոնլուայի դրուագը: Ասիկա տասնամեակներէ ի վեր աւանդութիւն եղած է Երուսաղէմի Անկլիքան մեծաւորին ի պատիւ:

Ռոնլուայի երգեցողութեան բաժինը ժառանգաւոր սաներ եւ Սրբոց Թարգմանչաց Դպրոցի փոքր մանչեր կատարեցին վերնատունէն, անջատ իրարմէ: Մանուկներու երգեցողութիւնը բարձրաձայն ճշալ էր առ հասարակ:

Արարողութեան միջոցին հասաւ. նախ ոստիկանապետը, պաշտօնական համազգեստով, եւ քիչ յետոյ՝ համաշխարհային համբաւի տէր քաղաքա-

պետ Թէտի Բուլէք, ընկերակցութեամբ կնոջ մը: Գէորգ Հինդլեան ասոնք տեղաւորեց իրենց վերապահուած առաջին շարքի աթոռներուն վրայ, Արձակումին՝ առաջ անցնելով ողջունեցի Թէտի Բուլէքը, յիշեցնելով 1980-ի համազումարին մասնակցողներու իր պաշտօնավայրը մեր տուած այցելութիւնը: Երբ բոլի քաղաքացիներն թէ Թորգոմ Պատրիարքի Ամերիկայի բարեկամները կը կարօտնան զայն, Թէտի Բուլէք բսաւ՝ «Անոնք պէտք է նեցուկ լինեն Պատրիարքին»:

Երեկոյեան Հակումին «Տէր, զի բազում եղան նեղիչք իմ» Սաղմոսը անշնորհք եւ հապենպ եղանակեցին ժառանգաւոր ուսանողները: Կարծէք շոգեկառք մը ճեպընթաց վազելով երկաթուղիի գիծէն դուրս շնորհալուրդաւ գլոր կ'իյնար: Նիւ Եորքի Ս. Ներսէս Դպրեմանքի ուսանողները աւելի ճաշակաւոր եւ ներդաշնակ կ'երգեն այդ սաղմոսը:

Յիսուսի վերջին գիշերուան տազնապի դրուագները պատմող վեց Աւետարաններու ընթերցումը կատարուեցաւ առանց յապաւումի, ներկայ աւագ վեղարաւորներու կողմէ, բացառութեամբ առաջինին - ամենէն երկարը, - զոր քաղուածարար կարդաց Թորգոմ Պատրիարք: Դաւիթ Սրբազան երկրորդ Աւետարանը կարդաց Հայերէն աշխարհաբար: Արձակումէն ետք համեստօրէն յայտնեց թէ այդ ընթերցումին համար գործածած էր Գարեգին Նպաստ: Տրապիզոնի Նոր Կտակարանի աշխարհաբար թարգմանութիւնը:

Տաճարէն ներս հետզհետէ աւելի կը ցրտէր օդը: Ոտքի վրայ էի կապերտով ծածկուած բազմոցի վրայ: Կռնակս անհանգիստ էր: Կուզէի նստիլ, ինչպէս կը նստէին որոշ պահերու դասի գլուխին մօտ գտնուող մի քանի վեղարաւորներ, սակայն կը մտահոգուէի որ նստիլ եւ յետոյ ետ կանգնիլ սահող կապերտի վրայ դժուար պիտի ըլլար ինձ համար: Երիտասարդի առաձգականութիւն չունէի այլեւս:

Դասին մէջ ինձմէ անմիջապէս վեր կեցած են Բագրատ Արեղան եւ մի քիչ աւելի փորձառու երիտասարդ վարդապետ մը, որ պոռալով երգելէն զատ աստե՛ն աստե՛ն դասէն կը հեռանար ու քիչ ետք կը վերադառնար: Բագրատ Արեղան զասպետն է ձախակողման դասի երգիչներուն: Նոյն պաշտօնով աջակողման դասէն կ'եղանակէ Գուսան Վարդապետը, որ աւելի վարժ է: Լուսարարապետի օգնական՝ Մայր Տաճարի աւագ լուսարար, երիտասարդ եւ հեզահամբոյր Բարսեղ Վրդ Գալէմտէրեանը արտօնուած է առանց վեղար հազնելու վարել իր անմիջական թուող գործերը աւանդատունէն: Փոքրահասակ ժառանգաւոր Հայկ Գազէզեան՝ Դ. դասարանի ուսանող, անմիջական օգնական է Հայր Բարսեղին: Որոշ պահու մը Հայկ Գազէզեան մտաւ ձախակողման դաս եւ կանգ առնելով իմ դիմաց, կամացուկ յիշեցուց ինձ թէ Աւագ Շարաթ Ճրագալոյցի պատարագիչն եմ: Չսպասեց պատասխանիս եւ մեկնեցաւ հանդարտ: Պէտք էր յայտնէի թէ յօժար եմ պատարագելու թէ ոչ: Այս է վանական աւանդական կարգ ու սարքը: Մոռցած էի որ հին օրերուն պատանի Հայկի այս ըրած ծանուցումը կը կատարէր մօրուսաւոր չափահաս ուրարակիր - լուսարար Մարկոսը:

Գիշերային ժամը վերջացած է եւ յաջորդը սկսելու պահն է: Վերարկու հագած ձախակողման դաս մտաւ ամենահաս Սահակ Գալայճեանը՝ «Իջեր յերկնից» շարականի ծանր երգեցողութեան օգնելու: Եկեղեցական երաժշտութեան ուսուցիչ եւ նախկին դպրապետ է Սահակը: Ան մեկնեցաւ «Փառք ի բարձունս»-էն անմիջապէս առաջ, ճիշդ այն պահուն երբ Հայկ Գազէզեանի միջոցաւ կանչուեցայ աւանդատուն: Գրեթէ բացարձակ մութին մէջ

պէտք էր պատրաստուէի խաշ եւ մեղրամոմի ձեռնին մազլցելու ամպիոն, հոնկէ քարոզս տալու: Տասնամեակներ առաջ երբ իմ հերթն կուգար այստեղէն երեկոյեան ժամերգութեան սկիզբը Յայսմաւուրք կը կարդայի բարձրաձայն, ծունկի եկած: Այժմ ոտքի կանգնած հարկադրուեցայ կարդալ հինգ թերթերու վրայ գրած, առանց գրակալի, հազիւ կարենալով օգտուիլ հալող մեղրամոմի լոյսէն: Որպէսզի չչփոփիմ, իւրաքանչիւր թերթ լրացնելու զայն ուղղակի գետին ձգեցի, ետքը հաւաքելու յոյսով: Քարոզս սկսելէս առաջ պէտք էր ունկնդրէի «Ո՛ւր ես, մայր իմ» արտականոն մեներգին, որ իմ աստ ուսանողութեանս շրջանին անծանօթ էր: Դասին մէջ բժմին եզերքը մեկուսի գետեղուած մետաղեայ մեծ աշտանակ մը դրուած էր 13 մոմ բռնող, որուն լոյսերը զոյգ առ զոյգ մարած էին շատոնց, իւրաքանչիւր Աւետարանի ընթերցումէն անմիջապէս ետք: Հակառակ մութին, կը զգայի որ տաճարէն ներս աշխարհական ժողովուրդը փոքրաթիւ էր, եւ կը կայանար Ամերիկայէն եւ Արեւմտեան Եւրոպայէն եկած ուխտաւորներէ: Փոքր էր նաեւ ներկայ վեղարաւորներու թիւը: Առանձնաբար խօսածիս համար գնահատանք յայտնեցին Դաւիթ Սրբազան, Պոստոնաբնակ Տօթ. Կարօ Կարապետեան, եւ Պէյրութցի ժառանգաւոր մը: Ուսարման արարողութիւնը վերջացաւ ժամը 11 ու կէսին: Ամերիկահայ սաներու եւ անոնց տիկիններու ուղեկցութեամբ այդ ուշ պահուն քալեցինք դէպի Նօթր Ծամ:

ՕՐ ՀԻՆԳ 24 ԱՊՐԻԼ՝ ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ

Ապրիլեան Եղեռնի 77-րդ տարեդարձի առթիւ Սրբոց Յակոբեանց Վանքի մեծ դրան առջեւ փողոցին եզերքը բազմութիւն հաւաքուած է առաւօտուն: Կարգ մը մանուկներ եւ պատանիներ Հայաստանի քարտէզով տպուած գունազարդ շապիկներ հագած են: Ժառանգաւոր ուսանողներու թափօրը, որուն կը հետեւին միաբանութեան անդամները եւ Պատրիարքը, կ'ուղղուի դէպի հարաւ: Ներկայ է դարձեալ Կանոնիկոս Բայթ, հագած իր հանգստաւէտ սպիտակ ոտնամանները, որոնց մասին առջի օր հարկ զգաց բացատրութիւն տալ: Երուսաղէմի խորտ ու բորտ ճամբաներուն վրայ քալել սովորական կօշիկով տաժանելի դարձած էր իրեն համար:

Ուշի, Վերափոխման եւ Հանգստեան շարականներ, արտատպուած եւ միակ էջի մը վրայ համադրուած, կ'երգուին թափօրի մասնակցողներուն կողմէ, ղեկավարութեամբ Հայր Գուսան Ալճալեանի: Պարիսպին վրայ եւ Դաւիթի Դրան մօտ գտնուող օտարականներ մեզ կը դիտեն: Ինքնաշարժ կառքեր, որոնք այս նեղ փողոցին մէջ մէկ ուղղութեամբ միայն կրնան շարժիլ, առայժմ կանգ առած են:

Հայոց գերեզմանատան մուտքին, Ս. Փրկչի Վանքի հողին վրայ կ'երեւայ վիթխարի կառոյցը հանգուցեալ Հայկ Գալուքեանի նուիրատուութեամբ շինուելիք Ս. Սարգիս Եկեղեցիին, որ առայժմ լաստակներով պսակուած կը սպասէ իր յետաձգուած լրումին: Կը մտածեմ. որո՞նք պիտի հաւաքուին այդ ապագայ հայ սրբավայրին մէջ աղօթելու: Բիշ անդին, մասամբ փլած կը թուի ըլլալ Ս. Փրկչի երկյարկանի վանքը, ուր մայրավանքէն միաբանութիւնը կը հաւաքուէր Հոգեգալուստին եւ մի քանի այլ տօնական առիթներով Ս. Պատարագ մատուցանելու: Ընծայարանէն մեկնելէս ետք 1941-ի ամառը Սուրբ Երկրի մէջ հարկադրական թէեւ կարճատեւ թափառումներու միջոցին գիշեր մը օթեանեցայ որթատունկերու կից վանական խուցի մը մէջ այստեղ, կարեկցող աշխարհական միաբանի մը թոյլտուութեամբ: Ինչ վիճակի մէջ են պատրիարքներու շքեղ դամբանները, որոնցմէ ոմանք 1948-ի Արաբ-Իսրայէլեան կռիւներուն ռումբերէ վնասուած էին: Ժամանակ չունիմ ստուգելու, որովհետեւ Եղեռնի զո-

Հերոս ոգեկոչման արարողութեան թափօրի մասնակցողներէն մէկն եմ՝ եւ պէտք է մնամ Արարայի Հայ Հերոսներու յուշարձանին մօտ: Աշխարհականներու գերեզմանի բաժինը անխնամ թողուած է. շիրիմաքարերու շուրջի խոտերը աճած են եւ յարդարանքի կարօտ են: Եղբայրներս մօտ սա պահուն կը ծածանին շատ մը հայկական դրօշներ կարմիր, կապոյտ, նարնջագոյն, վեր բարձրացուած Հայ պատանիներու ձեռքերուն մէջ: Երիտասարդ Հայ տիկին մը պերճախօս ճառով մը ելոյթ՝ ունեցաւ: «Արցախ» կը յիշեմ այդ ճառէն:

Կէսօրէն ետք ժամը 4-ուկէսին Քրիստոսի Թաղման Կարգին ժողովուրդի աչքառու բազմութիւն կար: Դասին ճիշդ կեդրոնը փոքր ատեանին մէջ ուղարկուած կը գրաւէ քառակուսի գերեզմանի յարդարանքը: Այս հաստատուն եւ անշարժ մնալիք գերեզման է, գետնէն վեր հետզհետէ նեղցող երեք յարկերով: Ամբողջը պատանքուած է սպիտակով: Զարդերը՝ բազում. Գէօթահայկան ծաղկամաններու մէջ վարդագոյն ծաղիկներ, աշտանակներ մոմ բռնած, նաեւ մէկական վարդ ծաղկամաններուն եւ աշտանակներուն միջեւ: Ասոնց հետ նաեւ տարբեր շարքի վրայ փոքր գեղակազմ մատեաններ, ճաճանչներ, եւ խաչեր: Իրապէս, իբր տիպար նկատի առնուելիք գերեզման մը: Ի զուր չէ որ սաղիմական երիտասարդ վարդապետ մը որ ծխատիրութիւն կ'ընէր Ամերիկահայ փոքր եկեղեցւոյ մը մէջ, այս գերեզմանէն ներշնչուելով աստղաձգործի մը շինել տուաւ աւագ Ուրբաթ օր գործածուելիք գերեզման մը, դասին կեդրոնը լեցնելու մեծութեամբ: Միայն թէ, Զատիկական շրջանէն ետք այդ մեծակ գերեզմանը մինչեւ յաջորդ աւագ Ուրբաթ պահելու յարմար սենեակ չունէր այդ եկեղեցին:

Քրիստոսի Թաղման Կարգի արարողութիւնը սկսաւ դասին մէջ: Զեա կրնար անտես ընել գերեզմանը: Խոնկը կ'այրի եւ անուշաբոյր ծովը կը բարձրանայ: Որոշ պահու մը դասէն զոյգ գիծով փոխադրուեցանք կեդրոնը ատեանին, կազմելով քառակուսի մը որու արեւելեան բաց կողմը կը Հպի գերեզմանին: Նախագահ Պատրիարքը գմբէթին ներքեւ կեցած է, եւ անոր աջ ու ձախ կողմն են եպիսկոպոս, վարդապետ, արեղայ, աւագութեան կարգով եւ աւելի վար՝ սարկաւազներն ու ժառանգաւոր սաները: Միակ ամուսնացեալ քահանայն այստեղ եւ եմ, թէեւ կը կարծեմ որ իմ հանդիպակաց գիծին վրայ կեցող անվեղար սպիտակամօրուս Հոգեւորականը քահանայ մըն է, ցարդ ինձ անծանօթ: Յետոյ կ'իմանամ որ ան Հայաստէր կաթողիկ վարդապետ մըն է, մեծաւորը Ս. Փրկիչ վանքի մօտ գտնուող Տորմիսիոն հաստատութեան, որուն բարձր Հնչող ժամացոյցը կը լսէինք մեր ուսանողութեան տարիներուն: Ամէնքս մեր ձեռքին ունինք լուցեալ մեղրամոն: «Ուալի քո, Քրիստոս, երկիրպագանեմք» երկարաչունչ երգի միջոցին Պատրիարքը կը յառաջանայ եւ ծնկաչոք կը համբուրէ գերեզմանին արեւմտեան ծայրը ցաթ աթոռակի մը վրայ դրուած խաչ եւ Աւետարան, եւ կը վերադառնայ իր նախագահի դիրքին: Ապա զոյգ առ զոյգ, աւագութեան կարգով մօտենալով իւրաքանչիւր դասէ, Հոգեւորականները խոնարհութիւն կ'ընեն Պատրիարքին, կը դառնան արեւելք, կը քալեն դէպի դիրեզմանին ծայրը եւ կը կատարեն ծնկաչոք երկրպագութիւնը: Ապա դառնալով արեւմուտք, միասին կրկին խոնարհութիւն կ'ընեն Պատրիարքին եւ կ'անջատուին իրարմէ, աջ ու ձախ իրենց շիրքերուն վերադառնալու: Այս մանրամասնութիւնները յիշելով է որ ասկէ երեք տարի առաջ երջանկայիշատակ Տիրան Արքեպս. Ներսոյեան իր վախճանումէն մի քանի ամիս առաջ Աւագ Ուրբաթ երեկոյ Նիւ Եորքի Ս. Ուալ Եկեղեցւոյ մէջ սաղիմական ոճով երկրպագութիւն կ'ընէր եւ շուրջիներուն կը Հրահանգէր նոյնը գործադրել:

Նախատեսակ եւս կատարուեցաւ ատենանին մէջ, որու սկիզբը մի քանի հոգեւորականներ մենեղեցիին «Պարզեւատուն ամենեցուն» արտառուչ շարականի՝ յաջորդական համարները: Լաւ առիթ է այս նայելու անզուգական այս տաճարի պատերն ու սիւները ծածկող նկարներուն եւ մթամած ձեղունէն կախուած մեծ ու պզտիկ կանթեղներուն:

Արամ Խաչատուրեան մեր հիւրանոց վերադարձէն առաջ Ամերիկահայ ուխտաւորներու տարաւ վանքի հարաւ արեւելեան կողմը գտնուող Ս. Հրեշտակաց Եկեղեցւոյ թաղէն, ցոյց տալու մեծ շէնք մը որ նախապէս հանգուցեալ Մկրտիչ Պետեւանի կաթի գործարանն էր, այժմ շատոնց ծախուած հրեաներու: Մեր ճամբուն վրայ նեղ անցքի մը մէջ հանդիպեցանք Արամի սեւազգեստ մօր - Արամի հայրը վերջերս մահացած է, - քրոջ, քեռայրին եւ ասոնց աղջնակին: Արամ, որ ամուրի է, իր մօր հետ այս թաղը կը բնակի: Տեսանք, առանց ներս մտնելու, Կիւպէնկեան մեծ շէնքը Արար-Խրայէլեան բախումներէն հոք շինուած, ուր հայ ընտանիքներ կը բնակին: Շէնքը իրեն կից ունի ինքնաշարժներու կանգնելիք մեծ բակ մը:

Ընթրիքէն հոք դեղահատ առնելով պառկեցայ, պայքարելու համար պաղաութեան դէմ: Մարիամը եւ մեր խումբի միւս անդամները Արամ Խաչատուրեանի կարգադրութեամբ գացին Ալեքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ կայացող Ապրիլեան Եղեռնի յուշահանդէսի մը ներկայ գտնուելու: Մարիամ վերադարձին երբ ինձ կու տար հանդէսի յայտագրէն օրինակ մը, դժգոհութիւն յայտնեց յայտագրին մասնակցող ամերիկահայ երուսողէմացի թղթակիցի մը որոշ արտայայտութեանց մասին: Ան, ըստ Մարիամի մեկնաբանութեան, իր ուղեւորին մէջ թիրախ ըրած էր ամերիկայի հայերը: Հայրենասէր ըլլալու օր է Ապրիլ 24ը:

ՕՐ ՎԵՑ - 25 ԱՊՐԻԼ, ԱԻԱԳ ՇԱԲԱԹ

Առաւօտուն՝ քալելով առանձին ժամը 6-45-ին հասայ Սրբոց Յակոբեանց մայր տաճարը: Որպէս ճրագալոյցի պատարագիչ պարտաւոր էի կարգաւ Գր. Տաթեւացիի Դաւանութիւն Ուղղափառ Հաւատոյ եւ ապա ծնկաշոք ըսել Մեղայն եւ ընթեռնուլ Գիշերային ժամերգութեան առաջին աղօթքը: Տաճարի ներսիդին չափազանց մութ ըլլալուն, մեծ դժուարութիւն ունեցայ առաջին երկուքը կարգալու: Զեւքիս հալող մոմի լոյսը եւ ակնոցս բաւական չէին օգնելու ինձ: Եթէ վանական եղած ըլլայի հաւանաբար անդիր սորված կ'ըլլայի արտասանելիքները:

Ժամերգութենէն հոք, Պատրիարքարան բարձրանալով Հայր Ռազմիկի միջոցաւ առի մեր թեթիւ պայուսակը որու շնորհիւ Պատրիարք Սրբազանին Ամերիկայէն ղրկուած թուղթեր բերած էինք:

Կը կազմուի թափօրը միաբաններու եւ աշխարհականներու, Ուրբաթ առտուանին հակառակ ուղղութեամբ քալելու լուեկայն դէպի Սուրբ Յարութեան տաճար: Կը գլխաւորէ Թորգոմ Պատրիարք: Կը լսուի միայն ճամբայ բացող երեք երիտասարդ բարապաններու մահակներուն սալաքարերու զարնուելուն ձայնը: Զեմ գիտեմ ինչու բարապանները հին աւանդութեան անհամաձայն պարզ դորշ համազգեստ հագած են: Պատրիարքին հետեւող վեղարաւորներու խումբին հետ իմ մօտս կը քալէ Կանինիկոս Բայթ, իր այլեւս յայտնի սպիտակ ոտնամաններով: Նշմարեց ինձ եւ միւս թափօրականներու իւրաքանչիւրին արուած 7 մոմերու սեղմ արցակը եւ ուզեց գիտնալ թէ ինք եւ այդպիսի մոմեր պիտի ունենա՞յ արդեօք: Գրիստոսի Գերեզմանէն «Լոյս» հանելու արարողութեան մասնակցելու կ'երթանք:

Ս. Ծարութեան տաճարի մուտքի բակին առաջնորդող եւ զառ ի վար շարուած քարէ աստիճաններուն վրայ նեղ փողոցին մէջ, շարժական պատուարի մը զբաժնէն ոստիկանները: Եւ սքեմ ունենալու առանց դժուարութեան անցայ առաջ, հրմշտուքէն զերծ մնալով: Սակայն իմ ետին մեր խումբի մնացեալ ուխտաւորները փակուեցան պատուարին ետեւ: Իմ միջամտութեան փորձը, «սոսնք Ամերիկայի Միացեալ Նահանգներէն եկած են» ըսելս, անտարբերութեամբ լսուեցաւ ոստիկաններէն, մինչեւ որ վրայ հասաւ տեղացիներուն լաւածանօթ Գէորգ Հինգլիանը:

Տաճարի Հայոց բաժնի նորոգուած տեսչարանին մէջ Պատրիարք Սրբազանը իր աթոռը բազմեցաւ, դռնէն հեռու: Մնացեալներս, բացառութեամբ Ամերիկահայ ուխտաւորներուն սակայն ներառեալ Կանոնիկոս Բայթօր Հիմա մօմի տրցակ ունէր, գրաւեցինք մէյ մէկ նստելու վայր այս անպատուհան սենեակին մէջ: Կը սպասենք: «Լոյս» Հանելու արարողութեան համար: Հայեր իրենց ընելիքը պէտք է համակարգեն Յունաց ընելիքին հետ: Տեսչարանի բաց դռնէն ներս կը թափանցէ տաճարի ներսիդին բարձրացող աղմուկը հետզհետէ աւելի ուժգին: Պատրիարք Սրբազանը, կարծէք անվրդով, ծոցի զրպանէն կը հանէ Կ. Պոլոս 1887-ին տպուած Հին փոքր օրացոյց համայնագիրտարան մը, եւ նշմարելով հետաքրքրուիլս, զայն ինձ փոխ կուտայ զրպանի խոշորացոյցով մը հանդերձ: Կրցայ մի քանի վայրկեանի հապենդ զննութեամբ ստուգել այս զրքոյկէն թէ 1889-ին Ամերիկայի Հայոց անդրանիկ հոգեւոր հովիւ ըլլալիք Յովսէփ Վարդապետ Սարաճեան 1887-ին Վասպուրականի Իննակնեան Ս. Կարապետի Վանքի բացակայ միարաններէն էր, եւ թէ նոյն տարին Կ. Պոլոս Պէօյիւքաթէրէյի Ս. Հռիփսիմեանց Եկեղեցւոյ քարոզիչն էր:

Ս. Ծարութեան տաճարի Հայոց բաժնի տեսուչ Վաղարշ Եպիսկոպոս ցցուած մազերով, կեղտոտած էնթարիով լոկիկ կ'երթայ կու գայ: Երկար սպասումէ ետք – Երուսաղէմի այս բաժնին մէջ երկու տարբեր ժամ կը կիրարկուի՝ Պաղեստինեան եւ Իսրայէլեան – յանկարծ մէկը տեսչարանէն ներս խուժեց յայտարարելու թէ կը սկսի թափօրը Բրիտանոսի Գերեզմանին շուրջ: Թափօրի հայկական բաժնի պոչը եւ զլուխը յայտնի չեն: Մերինին փակած պիտի ըլլան Ասորիներ եւ Ղպտիներ: Չեմ գիտեր ուր են Յոյները: Կար ժամանակ երբ Բրիտանական Հոգատարութեան շրջանին տաճարէն ներս կարգապահութեան կը հսկէին բարձրահասակ Անգլիացի զինուորականներ, անշատ պահելով իրարմէ մրցակից, հրմշտող Ուղղափառները եւ արհամարհանքով նայելով ամբողջ պատահածին վրայ: Այժմ Հայոց Պատրիարքութեան լուսաւանը Աւագ Թարգման Հայր Ռազմիկ Պօղոսեանն է, որ Գերեզմանի փոքր պատուհանէն «Լոյս»ը մեն բոցով մը յանձնելէ ետք բաշխուելու համար, շտապով ուսամնարձ կը բերուի տեսչարան, որպէսզի գլխուն խոյր հագնելով եւ գաւազան բռնելով զառնայ թափօրապետ: Մինչ այդ Պատրիարք Սրբազանը Հայոց բաժնի վերնայարկը զացած իրեն յատկացուած դահլէն կ'օրհնէ Գերեզմանին շուրջ խոնուած բազմութիւնը: Տարբեր ազգի իրարու զաւանակից թափօրականները շարական կ'երգեն – «բրիտանոս յարեաւ» – պոռալով: Աշխարհականներու յարուցած աղմուկը զրեթէ անլսելի կը դարձնէ Հայոց երգեցողութիւնը: Հայ

եւ Ասորի բազմութեանց ընդհարում կայ: Հայոց թափօրի զուգահեռական զիծերը միակ զիծի մը վերածուելու վտանգին մէջ են: Որոշ կէտի մը մեր ճամբան լայնցնելու համար մօրուսաւոր հայ երիտասարդ լուսանկարիչ մը որ թափօրական զարձած էր, քովիններուն նշան ըրաւ եւ «մէկ, երկու, երեք»

ձայնելով անոնց հետ միասնաբար փաղանգի նման խուժեց դէպի մերձակայ ոչ-հայ բազմութիւնը, զայն հրելով բոլորակի պատին կողմը։ Երգեցողութեան խառնիճադանճին հետ կը լսեմ ոչ-հայերու կողմէ ծափահարութիւն եւ թմրկահարութիւն։ Խժալուր ձայնարձակում։

Ժրազալոյցին՝ Սրբոց Յակոբեանց տաճար հասնելու համար փոշիէ զերծ ոտներով, նոթր Տամէն թաքսի մը կ'առնեմ։ Հայր Բարսեղ եւ պատանի Հայկ Գազէզեան՝ լուսարարապետին օգնականները, գործի վրայ են Ս. Ստեփանոսի աւանդատան մէջ։ Հայր Բարսեղ կ'ըսէ ինձ ի պատասխան մէկ հարցումիս թէ եթէ իր տեղ ընկնէ մը ըլլար այսպիսի աշխատանք կախաբոլը, պիտի չկարենար տոկալ։

Կանոնական երեկոյեան սաղմոսէ, աղօթքէ ետք կարգը եկաւ Հիմն կտակարանական ընթերցուածներուն, որոնց առաջինը աշխարհաբար կարդաց Դաւիթ Արքեպս. Սահակեան։ Երկրորդը հազիւ սկսած էր կարդալ նիհարաձայն Վանիկ Վարդապետը, երբ լուսարարապետ Սրբազանը նշան ըրաւ ինձ բեմ բարձրանալ, զգեստաւորուելու եւ պատարագի սպասներու պատրաստութեան հետամուտ ըլլալու փակ վարագոյրի ետին։ Զգեստաւորուելու համար ինձ կ'օգնէ Ամերիկահայ Մայքըլ Քէյրիշեանը, որ նաեւ կարդաց ճաշու Աւետարանը, ուղիղ եւ յստակ։ Խեղճ Ռուբէն Վարդապետ Յովակիմեան, մօտ 80 տարեկան ժամօրհնողը, երեք անգամ ի հեճուկս իր քալելու դժուարութեան բեմ ելաւ ինձ կամացուկ տեղեկութիւն տալու։ Նախ՝ «երեսունէ աւելի հաղորդուող պիտի լինի», ապա «անուաթոռի մէջ հիւանդ կին մը կ'ուզէ Ս. Հաղորդութիւն»։ Երբ ժամանակը գայ, մաղզմայի վրայ դիր ու ես անոր կը մատուցանեմ, ու վերջապէս՝ «հիւանդ կինը կարող չեղաւ սպասել, զայն տարին հիւանդանոց»։

Տաճարը այնքան մուկ է որ դժուարութիւն կ'ունենամ նշմարելու հաղորդուողներու իւրաքանչիւրի բերանը։

Պատարագի այս աւագ սեղանը ինձ համար բարձր է։ Սպիտակ կոռփուռայի փոխարէն լայն գինեգոյն ծածկոց մը կայ։ Հաշուի առնելով կոռփուռայի ներքեւի յատակը հինգ բարձրադիր աստիճաններ ունի սեղանը։ Կը համրեմ ընդամէնը 13 սկիհ, իւրաքանչիւրի մաղզման ուղղահայեաց ցուցադրուած սկիհի բերանին։ Նաեւ՝ նոյնքան թիւով ճաճանչներ, հայկական եւ այլ ոճով ծաղկամաններ։ Գազաթը՝ կեղրոնը դրուած տերեւաձեւ մեծ զարդարանք մը ողկոյզի քանդակներով եւ վեց փոքր նկարներով։ Այս բոլորին հետ 12-է աւելի աշտանակներ։ Զարմանալի չէ որ սեղանի աստիճաններու թափուր մնացած մակերեսը փոշեծածուկ է։ Բարձրահասակ աշխատաւորներու ճարտար խումբ մը անհրաժեշտ է ելնարանի օգնութեամբ այս բոլորը յաճախակի վար իջեցնելու, փոշիները սրբելու, հարկ եղածը փայլեցնելու եւ սեղանը դարձեալ յարդարելու համար։

Պատարագի վերջաւորութեան կատարուեցաւ Ս. Զատիկի նախատօնակ։ Ապա չարական երգելով ցից սանդուղներէ կը բարձրանանք միաբանական սեղանատուն։ Այնտեղ կը կարդամ արձակումի Աւետարանը Մատթէոսի վերջին գլուխէն։ Կ'առաջնորդուիմ դէպի վար՝ աւասդատուն, ուր պատարագիչի զգեստներս հանելէ ետք տեղւոյն ծանօթ սպասարկողի մը օգնութեամբ կը գտնեմ սեղանատուն տանող սանդուղները։ Հոն գլխաւոր տեղը՝ մի քիչ մնացեալէն բարձր, նստած է Պատրիարք Սրբազանը։ Մի քանի ոտք անդին՝ ձախին՝ լուսարարապետ Սրբազանը։ Մարիամին ու ինձ մօտակայ մէկ

աստիճան ցած մակարդակի վրայ որպէս պատուոյ հիւրերու տեղ յատկացուցին: Մեր ձախին, աւելի վար սեղանի մը եզերքը ճաշի նստած են մի քանի վարդապետներ: Նաւակատիք է. պատրաստուած ընթրիքը տապկուած ձուկ է, հետը գետնախնձոր:

Ընթրիքէն անմիջապէս ետք, որպէս պատարագը լրացուցած ժամարար, ըստ վանական սովորութեան կ'երթամ դաւազանակիր Կոմիտաս Վարդապետ Շէրպէթեանի առաջնորդութեամբ նշխար մատուցանելու Պատրիարք Սրբազանին անոր գրասենեակին մէջ: Հարկ է որ արտասանեմ Սաղմոսէն հատուած մը՝ «Առաքեացէ քեզ Տէր օգնութիւն ի սրբութենէ իւրմէ՛ի Սիոնէ, եւ ընկալցի զքեզ» - Սաղմ. ԺԹ 3 -, որու փորձառութիւնը չունենալու, Կոմիտաս Վարդապետ բառերը մի առ մի կը յուշէ ինձ: Թորգոմ Պատրիարք առնելով մատուցուած զոյգ մը նշխար, ինձ ստորագրել կուտայ փոքր տոմար մը որպէս ժամուցի ստացագիր եւ կը յանձնէ պահարան մը: Նշխարները ստացած պահուն ան կը պատասխանէ՝ «Յիշեացէ Տէր զամենայն պատարագս քո, եւ զուխտս քո ընդունելի արասցէ»: - Սաղմ. ԺԹ 4 -:

Ատեն մը ետք երբ հիւրանոց վերադարձիս կը միանամ մեր խումբի ընկերներուն, կը պատմեմ անոնց նոր փորձառութիւնն եւ անոնց ներկայութեան կը բանամ պահարանը: Ստացագրիս համապատասխան գումարը ներփակուած է. հետը կայ նաեւ - ինձ համար անակնկալ -, ժամուցի եռապատիկէն աւելի մեծ գումար մը ներկայացնող իսրայէլեան թղթադրամ մը:

Կէս գիշերէն քիչ անց, կոչնակ, եւայլն - հին օրերուն քաղձրածայն երգող մունետիկ -, պիտի արթնցնեն Սրբոց Յակոբեանց վանքի միաբանութիւնն ու աշխարհական բնակիչներ, երթալու Սուրբ Յարութեան տաճար, նախ Ս. Զատկի պատարագը Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները հանդիսաւոր կերպով կատարելու: Լուսարարապետ Սրբազանը թելադրած է ինձ որ՝ հասնիմ «Փառք ի բարձունս»-ի սկիզբը: Նոթր Տամի զարթուցիչ պաշտօնեային հրահանգ տուինք ժամը 4-ին զանգահարումով արթնցնել զիս:

ՕՐ ՈՒԹ՝ 27 ԱՊՐԻԼ - ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

Նախաճաշի պահուն մեր սեղանակից միւս ընկերներու ժամանումէն առաջ հասած եւ մտախոհ նստած է Կրէյս Փինէճեան: Կը յայտնէ երէցկնոջ եւ ինձ թէ քիչ առաջ անդր-Ատլանտեան հեռաձայնով խօսած է ամուսնոյն Զարլզի հետ, որ գուժած է իրենց Ուայթօֆ - Նիւ Ճըրզի - բնակող հարեւանին եւ բարեկամին էն Քալիկեանի քեռայրին մահը: Այս պահէն չուրջ երեսուն ժամ ետք Նիւ Եորք վերադարձած պիտի ըլլան էն Քալիկեան, ամուսինը եւ մնացեալ ամերիկահայ ուխտաւորները բացի երէցկիւնէն եւ ինձմէ: Կրէյս կը վարանի տխուր լուրը յայտնել էնին: Քորհուրդ կուտանք չյայտնել առ այժմ, այլ սպասել որ էն իմանայ զոյժը երբ իր հարազատները դիմաւորեն զինքն ու ամուսինը:

Աւանդութիւն դարձած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց տաճարին մէջ Զատկի Երկուշաբթին հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանել եւ ապա կատարել մեծահանդէս թափօր նոյն տաճարի կամարներուն տակ: Մինչեւ հասանք հայկական տաճարը, պատարագը հասած էր Ճաշու Գրքի ընթերցման պահուն: Չորս վարդապետներ թագակիրը սպասարկեն բեմին վրայ, ինչպէս նաեւ չորս քչոցակիր, երկու մոմակալ սարկաւազներ, Զգեստները՝

ծիրանազոյն: Պատարագիչն է Թորգոմ Պատրիարք Մանուկեան: Սրբազանի քարոզին բնարանն էր «Սա եմ ճանապարհ եւ լոյս եւ կեանք»: Ան կապեց Յիսուսի այս յայտարարութիւնը Բրիտոննէական ընդհանուր եկեղեցւոյ առաքելութեան եւ Հայաստանեայց եկեղեցւոյ դերին: Պատրիարքը կոչ ըրաւ որ աշխարհի ութ միլիոն հայերէն ուխտաւորներ զան Հայ Երուսաղէմ, տարուէ տարի:

Պատարագէն անմիջապէս ետք եռադարձ կատարեցինք թափօր մեծով պղտիկով, ժողովուրդի փոքր բազմութեան ընդմէջէն: Հոգեւորականներս ձախ ձեռքով մոմ իսկ աջ ձեռքով վեր բռնած էինք մէկական մետաղեայ պահպանակ մասունքի: Պատրիարքը կը հանդիսապետէր շորս սպասարկողներու վեր բռնած ամպշուփանիին տակ քալելով: Վերջաւորութեան՝ Պատրիարք. եպիսկոպոսներ եւ աւագ վարդապետներ ելան բեմ, մինչ ժառանգաւորները ծնրադրած երգեցին «Տէր, ողորմեա», որուն յաջորդեց սրտառու «Ճանապարհ» մեներգը, երգուած Սահակ Գալաճեանի կողմէ: Յակոբեան սուրբերը այդպէս բարի ճանապարհ կը մաղթէին իրենց տունները վերադաձող Հայ ուխտաւորներուն:

Թափօրով անցնելով տաճարի մուտքի առջեւի դաւիթէն, բոլորս մեղի հետեւող ժողովուրդին հետ բարձրացանք Պատրիարքարանի դահլիճը, ուր աշխարհականներ եւս աւելի ունեցան Պատրիարք Սրբազանին Մ. Զատիկ մաղթելու եւ անկէ ի նշան օրհնութեան մէկական թարմ նշխար ստանալու: «Ընդարձակ եւ փառաւոր սրահ մըն է այս դահլիճը, իրաւամբ Վեհարան կոչուելու արժանաւոր, որ ամէն այցելուներու հիացման առարկայ դարձած է», գրած է Մ. Օրմանեան Հայկակաթ Երուսաղէմ գրքին մէջ: «Պատրիարքարանը կառուցուած է 1853-ին Զմիւռնիացի Յովհաննէս պատրիարքի ձեռքով, եւ մենք կրնանք աւելցնել թէ կառուցանողի ճաշակին եւ մեծագործութեան արտայայտութիւնն է այդ հոյակապ շինուածքը, որ նմաններու հետ իրաւամբ կրնայ մրցիլ» - անդ՝ 37-38 - Մ. Օրմանեան Յովհաննէս Պատրիարքի «ազդեցիկ դիրքին եւ հնարիմաց միտքին» կը վերադրէ այն իրողութիւնը որ կառուցումի ընթացքին շէնքին ուղուած ընդարձակութիւնը տալու համար պարտաւորուած է հասարակաց փողոցին վրայէն անցնիլ, եւ դէպի վանքին պարտէզը երկարիլ եւ այդ նպատակով փողոցին վրայ հաստակառոյց կամար մը շինել» - անդ՝ էջ 39 -:

Երբ վար իջնաք ես անգամ մը եւս կորսնցուցի հետքը մեր խումբի ընկերներու: Վանքի աւագ դուռը հասնելուս ականատես եղայ պատահարի մը որ ցնցեց ջիղերս: Մօտ հինգ կամ վեց տարեկան մանչուկ մը սուրալով վանքի ներսէն դուրս խոյացաւ այն պահուն երբ ալէն ինքնաշարժ մը արագօրէն կուգար Պատրիարքարանի տակի փողոցէն դէպի հարաւ երթալու նպատակով: Մանչուկը անկասկած պիտի բախէր կառքին, սակայն մեքենավարը ականթարթի մը մէջ զայն նշմարեց եւ յանկարծակի զսպեց կեցուց կառքը: Երիտասարդ տիկին մը խուժելով գրկեց չլմած մանչուկը եւ դրաւ իր ձեռքը երկար պահ մը անոր բարախող կուրծքին վրայ:

Երբ մերոնք հասան Հիւրանոց ինձմէ ետք, յայտնեցին որ Պատրիարք Սրբազանը նշխարի քաշխումէն ետք կեցուցած էր դիրենք եւ Պատրիարքարանի դահլիճի պատերուն դիմանկարները բացատրելէն յետոյ իւրաքանչիւրին մէյ մէկ ստափազարդ կողքով Անգլերէն Սուրբ Գիրք նուիրած էր, աւելցնելով իր ստորագրութիւնը:

Կէսօրէն ետք՝ Հայր Ռազմիկ եկաւ եւ մեր հետ գնաց Դամասկոսի Դրան մօտակայքը Փիզիքական համեստ պայմաններու մէջ գտնուող Վեցերորդ

Դարու մեծ մոզայիքը Ս. Գողիկոսոսի Արուեստի այս արժէքաւոր Հայկական գործը Հնադարեան տունի մը սալալատակը կը կազմէ: Ապա առանձին զացի կիւլպէնկեան մատենադարան եւ մնացեալ Հին շրջանի Սիօնները աչքէ անցուցի: Մատենադարանը խոնաւ է եւ ցուրտ: Նորոգութեան կարիք ունի: Կիւրեղ Սրբազան Գարիկեան պրպտումիս միջոցին մի քանի անգամ մատենադարան եկաւ: Վանքի կացութեան մասին արհեստանք յայտնեց ինձ: Ժամադրուեցայ յաջորդ օր յետմիջօրէին այցելել իրեն երէցկնոջն Հետ եւ իր ընկերակցութեամբ երթալ վերջերս վերահատութենէ ապաքինող Նորայր Արքեպս. Գողարեանի տեսութեան:

Երեկոյեան ժամը ութուկէսին Նօթր Ծամի Ռոթիւրըւի չքեղ ճաշարանին մէջ Թորգոմ Գատրիարք, ընկերակցութեամբ Հայր Ռազմիկի եւ Արամ Խաչատուրեանի սեղանակից եղաւ մեզի, խումբի անդամներու մեծամասնութեան Նիւ Եորք վերադարձի նախօրեակին: Ունեցանք բաժակաճառ, զնահատական խօսք, եւ ողջերթի շերմ բարեմաղթութիւն: Կերուխումը չափազանց ճոխ էր:

Մեր խումբի մնացեալ Հինգ անդամները կէս գիշերէն ետք ժամը երեքին պիտի մեկնէին դէպի Թէլ Ավիվ, Հոնկէ սաւառնակ առնելու դէպի Նիւ Եորք: Հազիւ Հասած Նիւ Եորք, էն Տէվէճեան Հինգշաբթիէն առաջ որպէս Պէյսայտի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ պատգամաւոր պէտք էր փութար Հարաւ, Ճլորիտայի Պոքա Րաթոն քաղաքին մէջ կայանալիք տարեկան Թեմական Գատգամաւորական Ժողովին թանակցելու:

Խղճամիտ, ժրաջան եւ ուշադիր դեկավար էր էն Տէվէճեան մեր խումբի ուղեւորութիւնը կազմակերպելու տեսակէտէն: Իմ եւ երէցկնոջ երկու օր ետք Երուսաղէմէն մեկնելուն եւ Աթէնք Հասնելուն առնչութեամբ վերջին տեղեկութիւնները եւ Հրահանգները տուաւ: Յանձնեց մեր անցադրերը եւ Յունաստանի մեր զբօսապտոյտին համար գործածուելիք արտօնագրեր: Ըսաւ թէ մեր վնասուած ճամբորդական պայուսակը նորոգուած Երեքշաբթի պիտի յանձնուի մեզի Հիւրանոց բերուելով: Խնդրեցի էն Տէվէճեանէն իր տունը Հասնելուն Հեռաձայնել մեր մանչուն Արային:

ՕՐ ԻՆՆ - 28 ԱՊՐԻԼ

Թէեւ այսօր եւս - Երեքշաբթի - զատկական պարագաներու շարքին պատկանող պատարագ կը մատուցուի Սրբոց Յակոբեանց տաճարի մատուռներէն մէկուն մէջ, զանց կ'ընեմ ժամապաշտութեան երթալ: Մարիամին Հետ քալելով վայրէջք կ'ընեմ առաւօտուն դէպի Դամասկոսի դուռ, մտնելու Երուսաղէմի Արարական շուկայի նեղ փողոցներու ցանցին մէջ: Խանութները՝ փոքր, իրարու կից են: Համեմ, անուշեղէն, թարմ եւ պահածոյ ուտեստեղէն, զգեստ, ոտնաման, առտին գործածուելիք փոքր առարկաներ, արդուզարդի իրեղէններ, յուշանուէր: Այս բոլորը ցուցադրուած են խանութներու խորքէն դէպի փողոց յորդեւելով: Կը յորդի նաեւ այլեւայլ բուրումներու խառնուրդ մը: Կատուններ՝ շատ՝ մկներ ողջ մնալու յոյս չեն ունենար այստեղ: Փոքր շորքոտանի զբաստներ տեղ տեղ կ'անցնին փողոցին մէջտեղէն, փական ոչ ինքնաշարժ կառքեր, որովհետեւ ճամբան ելեւէջներ ունի: Ըրինք մի քանի զնումներ, ամէն քայլափոխի Հրապուրել փորձող վաճառորդներու շատ անգամ չօջ՝ ըսելով Հանդերձ: Ինձ համար զոյգ մը սամուալ ընտրելու առթիւ, գինը վճարելէս ետք երիտասարդ խանութպանը ուրախութեամբ մեզ Հրաւիրեց վերնայարկը ուր աթոռ եւ սուրճ Հրամցուց: Իսլամ ըլլալով Հանդերձ, Հետաքրքրուեցաւ որ իրեն համար Հարսնցու ունի՞նք արդեօք:

Հրատարակուին Երուսաղէմ կամ այլուր: Իր նորագոյն երկու գրքոյկներէն նուէր տուաւ ինձ: Կոթողական գործ է Երուսաղէմի վանքի Ս. Թորոս Եկեղեցւոյ մէջ պահուող ձեռագիրներէն երեք հազար հատի իր պատրաստած ցուցակը յաջորդական տասնէ աւելի հատորներով, Հրատարակուած մի քանի տասնամեակներու միջոցին, մասնագիտական նկարագրականով, որ անչափելի լոյս խլած պէտք է ըլլայ Սրբազանի աշխօրէն: Իր այս ապաքինման վիճակին մէջ Նորայր Սրբազան առանձին դասեր կուտայ իրեն ֆիզիքական խնամք տուող երիտասարդ նորընծայ արեղայի մը: Կիւրեղ Սրբազան քիչ ետք մեկուսի յայտնեց ինձ հայրենի մեծ բանասէր Փրոֆ. Լեւոն Ուշիկեանի վկայութիւնը Նորայր Արքեպս. Պողարեանի վաստակի մասին սապէս. «Հայաստանի մէջ ինչ որ կարող չեղանք իրագործել բազմանդամ յանձնախումբով, Նորայր Սրբազան միւս միեակը իր աշխատանքով յաջողցուց Երուսաղէմի Հայոց վանքին մէջ»:

Հերթը այժմ Կիւրեղ Եպս. Գաբրիէանինն է: Յնոր տնօրինութիւն ան իր տրամադրութեան տակ ունի Նորայր Սրբազանի սենեակին կից մեծ սենեակը իրր ընդունելութեան եւ աշխատանքի սենեակ, եւ անոր կից անկիւնի ննջասենեակը: Ընդունելութեան սենեակին մէջ Կիւրեղ Սրբազան հաւաքած է պատմական հայ եկեղեցիներու լուսանկարներ եւ արձանակերպ մանրատիպեր եւ կարգ մը հնութիւններ: Կիւրեղ Սրբազանի հնագիտական պրպտումներուն առարկայ եղած են Սուրբ Յարութեան տաճարի գետնափոր Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ յարակից մասերը, ինչպէս նաեւ Թարգմանչաց Վարժարանի մերձակայ Սրբոց Հրեշտակապետաց Եկեղեցին: Սակայն ասոնցմէ աւելի Կիւրեղ Սրբազան կը հետաքրքրուի եւ կը մտահոգուի Սրբոց Թարգմանչաց վարժարանով, որ մանկապարտէզէն մինչեւ բարձրագոյն դպրոցի բաժիններ ունի եւ որուն շրջանաւարտները կը յաջողին համալսարաններ ընդունուիլ: Երուսաղէմի Հայոց թիւնը զգալապէս նուազած է, եւ հետեւարար նօսրացած է ուսանողութեան թիւը: Կիւրեղ Սրբազան կը չեչտէ դպրոցին ոչ միայն ակադեմական բարձր որակը այլ նաեւ բարոյական դաստիարակութեան բարձր չափանիշները: Կուտայ օրինակը օտար ընտանիքի մը որ նախընտրած է տան զաւակները արձանագրել տալ հայկական այս կրթարանին մէջ, հաւանելով որ անոնք Հայերէն ուսանին: Թարգմանչաց վարժարանի Հայերէն Գրաբարի ուսուցիչն է Իրլանտացի ծնողք ունեցող Օր. Րոպերթա Լրուինը, եկած հեռաւոր Թէքսասէն: Գիտէինք որ ամերիկահայ մեր ուխտաւոր ուղեկիցները տուն մեկնելէ առաջ այցելած էին Կիւրեղ Սրբազանին եւ անոր դրամական նուէրներ յանձնած էին Թարգմանչաց դպրոցի կարիքներուն համար: Մարիամն ու ես այս առթիւ Ամերիկեան թղթաղրամով նուէր մը յանձնեցինք, զոր գնահատական ջերմ խօսքով ընդունեց Կիւրեղ Սրբազան, մեզ եւս համարելով բարեբար Թարգմանչաց Վարժարանին:

Վանքէն Հիւրանոց վերադառնալէ առաջ անգամ մը եւս տեսանք Թորգոմ Պատրիարքը իր գրասենեակին մէջ, ուր նախկին սաղիմական Նահապետ Մելքոնեանին որպէս Գալիֆորնիա Հրատարակուող հայ շաբաթաթերթի մը թղթակիցի տեսակցութիւն շնորհած էր Սրբազանը այդ պահուն: Պատրիարքի մէկ պատասխանէն յայտնի կ'ըլլայ որ վանքի եւ միաբանութեան զանազան բաժանմունքներուն համարատու ըլլալէ խուսափիլը կը մտահոգէ զինք: Պատրիարքը իրաւամբ կ'ուզէ գիտնալ թէ եկամուտները ինչպէս կը մատակարարուին կամ կը ծախսուին: Նահապետ Մելքոնեան մեզմէ առաջ

Հիւրանոց՝ կէսօրէ ետք մեր նորոգուած ճամբորդական պայուսակը վերադարձուած գտանք: Ժամը երեքին մօտ զացինք Հայոց վանք, հին տպարանի շէնքին վերեւ գտնուող սենեակներէն մէկուն մէջ՝ ապրող տարեց Հայուհի մը փնտռելով դիւրաւ գտանք, եւ առանց բնակարանէն ներս մտնելու անոր տուիք տեղեկութիւն իր նոր այրիացեալ ամերիկարնակ քրոջ՝ մասին: ապա առաջին անգամն ըլլալով մեր այս ուղեւորութեան ընթացքին, մտանք Պաղչէ Թաղ, միաբան վեղարաւորներու սենեակներու նորոգութեան ծանօթանալու - միաբանները մինչ այդ իրենց բնակութիւնը փոխադրած են Ալեքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարան եւ Մարտիկեան Թանգարան - Եւ Օրուան այն պահն էր երբ ափ մը գործաւորները լրացուցած իրենց աշխատանքը կ'արձակուէին Հայ վերակացուն կողմէ: Մարիամ լուսանկար առաւ խուցի մը ներսիդին: Իւրաքանչիւր միաւոր պիտի բաղկանայ երկու սենեակէ, եւ պիտի ունենայ առանձին լուացարան, ինչ որ մեծ բարելաւում կը նշանակէ: Յուրտին դէմ պաշտպանուելու համար կը հաստատուի կեդրոնական ջնուցման սարքուածք: Պաղչէ Թաղի արտաքին բակերէն անցնող շի կրնար անդրադառնալ թէ այդ քարաշէն հաստ պատերէն ներս ինչպիսի արմատական բարեփոխում կը կատարուի: Թորգոմ Պատրիարք Մանուկեանի այս յառաջդիմական ձեռնարկը մտնում համարող միաբաններ ի վերջոյ պէտք է գնահատեն անոր յօգուտ իրենց առողջութեան եւ Հանգիստին կատարած այս սրտմաշուք աշխատանքը:

Սրբոց Թարգմանչաց Վարժարանի մուտքին կը սպասէր մեզի տեսուչ Կիւրեղ Եպս. Գարիկեանը: Մեզ առաջնորդեց դպրոցի հանդիսասրահը առաջին յարկին վրայ: Պատերուն շարուած են տասնամեակներու ընթացքին դպրոցին հասցուցած շրջանաւարտներու բազմաթիւ խմբանկարները: Կը նշմարեմ մի քանի ծանօթ դէմքեր, սակայն Մեսէլուէց ապրող այրի երէցկին Վարդանուշ Աւագեանը - ծնած Մարտիրոսեան - մատնանիչ ընողը Կիւրեղ Սրբազանն է: Սրահի նստարանները հինցած են: Զանց կ'ընենք տեսչարան բարձրանալ, եւ Կիւրեղ Սրբազանի առաջնորդութեամբ կ'երթանք հարեւան շէնքը որ այժմ Մարտիկեան երկյարկանի Թանգարանն է: 1930-40-ական թուականներուն այս շէնքին մէջ կը ննջէին իմ սերունդի ժառանգաւոր եւ սարկաւազ ուսանողները: Այստեղ մէկական անպաճոյճ աշխատասենեակ ունէին ի միջի այլոց Յակոբ Օշական եւ Շահան: Պէրպէրեան՝ մեր նշանաւոր ուսուցիչները: Շէնքի երկրորդ յարկի հիւսիս-արեւելեան անկիւնի արեւոտ սենեակին մէջ - հին օրերուն ժառանգաւորաց Վարժարանի տեսչարան - կ'ապաքինի վերջերս վերահաստութեան ենթակուած Նորայր Արքեպս. Պօղարեան: Կը համբուրենք ալը: Մարմինով նիւար, մտքով պայծառ եւ արթուն, ինչպէս էր 1934-ին երբ իբր նորեկ ուսանող կ'աշակերտէի իրեն Հայոց աւանդական Պատմութեան դասին: Իմ սաղիմական եօթնամեայ ուսանողութեանս դասատուներէն միակ ողջ մնացած վեղարաւոր ուսուցիչն է Նորայր Սրբազան: Խօսքը կ'ընեմ Հալէպի Սալիպէ Փողոցի Պօղարեան Գրատան, որու տէրն էր Նորայր Սրբազանի կրտսեր եղբայրներէն մին: Սրբազանը ոգեւորութեամբ կ'ընէ պատմականը այդ գրատան սկզբնաւորութեան, երթալով իր ծննդավայրը Այնթապ 1919-1920 յետգինադարեան շրջան, երբ պատանի տարիքին կը ստանձնէ գրատան վարչութիւնը ի հեճուկս թրքական ընդդիմութեան: Նորայր Սրբազան անդադար կը պրպտէ, կը հաւաքէ, կը գրէ, եւ իր հեղինակութիւնները կը

իմացած է որ Նիւ Ճըրզիի մէջ քսան տարիէ ի վեր ծխատէր հովիւի պաշտօն վարող ամերիկածին Յուսիկ Մ. Վրդ. Պաղտասեան վերջերս վանքի միաբանական ժողովէն հաւանութեան քուէ ստացած է եպիսկոպոս օծուելու: Այդ աստիճանով բարձրացած Հայր Յուսիկ Ամերիկայէն պիտի վերադառնայ վանք ուր պիտի շարունակէ իր կարեւոր պաշտօնը որպէս Պատրիարքութեան պատկանող կալուածներու տեսուչ:

Նշմարեցի որ իմ փոխադրած նկարը – Խաչելութեան – զոր հեղինակած էր Նիւ Եորք բնակող Սիմոն Սամսոնեան, ծրարէն դուրս հանուած էր եւ առայժմ յենած էր զրասենեակի արեւմտեան պատի մեծ կոպըլէն կարապետին:

Սիւլվա Մանուկեան, Պատրիարքի եղբոր Խաչիկի կինը, որ Ջատիկէն քիչ առաջ եկած էր Երուսաղէմ մասնաւոր գործով մը, Պատրիարքարանի զրասենեակներէն մէկուն մէջ կը պարապէր, երեկոյեան ուսուցիչներու խումբի մը իր տալիք դասախօսութեան առնչութեամբ: Սիւլվա՝ ծնած Ֆրանսա, Բէտքլիֆ համալսարանէն շրջանաւարտ, տարիներէ ի վեր բարձր պաշտօն մը ունի Լոս Անճելըսի հանրային մատենադարանի վարչութեան մէջ: Ան լաւ գիտէ Հայերէն:

Վարը՝ բակին մէջ տեսանք. անցնող եօթնեակի ընթացքին քանիցս տեսած ըլլալէ ետք, մեր հանգուցեալ անգուգական ուսուցիչ Շահան Պէրպէրեանի որդին Արտաւազդը, ասպարէզով նկարիչ: Ան տարիներով բնակելէ. ետք Փարիզ, այժմ փոխադրուած է Ավիյոն, հարաւային Ֆրանսա: Արտաւազդ Ս. Յարութեան տաճարի հայկական բաժնին մէջ, ինչպէս նաեւ Պատրիարքարանի մուտքի սրահին մէջ ունի իր գեղարուեստական աշխատանքին պտուղները՝ ոմանք մեծ պաստառներ: Կ'ըսէ թէ Անթիլիասի Կաթողիկոսարանին համար եւս նկարներ յօրինած է: Ի պատասխան հարցումիս Արտաւազդ յայտնեց թէ Փարիզ բնակող եւ անդ Հայ Եկեղեցւոյ վարչութեան մասնակից տաղանդաւոր Արմենակ Գույումճեանը – նախկին Հրազդան վարդապետ՝ ձեռնադրուած Երուսաղէմ 1938-ին Թորգոմ Գուշակեան Պատրիարքէն – մի քանի տարի առաջ մեռած էր: Մարիամն ու ես Արմենակը տեսած էինք Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ սրահին մէջ 1962-ի Այլակերպութեան կիրակին, պատարագէն. ետք Ֆրանսայի հայոց Առաջնորդ լուսահոգի Սերովբէ Արքեպս. Մանուկեանի միջոցաւ զայն ճանչնալով իր կարգաթողութենէն եւ ամուսնանալէն տարիներ կտր: Արմենակ 70-ական թուականներուն սկիզբները այցելեց Նիւ Ճըրզի բնակող իր մէկ տարեց ազգականին, եւ անոր հրաւերով հաւաքուած Տիրան Արքեպս. Ներսոյեանն ու մի քանի նախկին սաղիմական դպրոցակիցներ ուրախացուց Շահան Պէրպէրեանէն սորված շատ մը երգեր երգելով խանդավառ տրամադրութեան մը մէջ:

ՕՐ ՏԱՍՆ - 29 ԱՊՐԻԼ

Ջատիկ Երկուշաբթին Հայր Ռազմիկ մեր խումբի մնացեալ անդամներուն բաշխած էր օրինակներ Անգլերէն նոր պրակի մը Պատրիարքարանէն պատրաստուած, որպէս վանքի մասին ուղեցոյց ուխտաւորներուն: Մարիամ պրակը թերթատած ատեն նշմարած էր սխալներ եւ զանոնք մատնանիչ ըրած էր Պատրիարք Սրբազանին, որու հաւանութեամբ զրաւոր սրբազրութեան ձեռնարկեց երէկ երեկոյ:

Այսօր արեւամուտէն առաջ պէտք է մեկնինք Երուսաղէմէն: Նախաճաշէն ետք, Մէրիին սրբազրած պրակը Պատրիարքին յանձնելու համար քալելով կ'երթամ վանք: Տաք է օդը: Պատրիարքի գրասենեակի արտաքին դուռը բացողն է Սիրվա Մանուկեանի որդիներէն Վահանը, նոր ժամանած Լոս Անճելըսէն, որ սեւ վերարկու հագած կամաւոր օգնութիւն կ'ընծայէ: Պատրիարքին մօտ ինձմէ առաջ հասած է տեղեկատու դիւանի պաշտօնեայ Տիկ. Նորա Նազգաշեան, Սիոն պաշտօնաթերթի յաջորդ թիւի պատրաստութեան գործով: Մինչ կը սպասեմ, նոյն դիւանէն Սարգիս Պօյաճեան կը հասնի ինձ համար բերելով Սիոնի նորագոյն երկու թիւերը, անշուշտ Պատրիարքի հրահանգով: Հրաժեշտ առնելու պահուն, Սրբազանը քալելով մինչեւ գրասենեակին դուռը, փափաք կը յայտնէ որ Ամերիկա վերադարձիս խօսիմ Օհայօ ապրող Տոքթ. Յակոբ Ներսոյեանին եւ թելադրեմ անոր որ ծրագիր մը կազմենք ժառանգաւորաց Վարժարանին մէջ կիսամեակ մը դասախօսելու ուղղութեամբ:

Վարը, վանքի դուռը հասնելու ճամբուն վրայ հարկ եղաւ որ կանգ առնեմ հեռախօսի պաշտօնեայ Պոլսեցի Շահան Սարկաւազ Քէօսէեանի նեղլիկ խցիկին առջեւ: Հոն է Գէորգ Հինդլեան, որ սուրբ Երկրի Հայոց պատմութեան իր հեղինակած Անգլերէն գիրքէն օրինակ մը իր ստորագրութեամբ կը ձօնէ ինձ: Տիար Հինդլեան կը խնդրէ որ մի քիչ սպասեմ որպէսզի արդէն իսկ Ամերիկա վերադարձած Մայքըլ եւ Լանա Քէիշեանի յանձնուելիք մի քանի պահարաններ բերէ ինձ տալու:

Քանի որ պիտի սպասեմ, կը մտնեմ Ալեքս եւ Մարի Մանուկեանի բարերարութեամբ շուրջ քսան տարի առաջ կառուցուած ժառանգաւորաց Վարժարանի շէնքի բակէն ներս: Դռնապան չկայ: Կը թուի թէ փողոցէն անցնողը կրնայ ներս մտնել՝ գէթ բակը: Կարելի է հետեւցնել թէ գիշերները այս շէնքին մէջ բնակողներ կրնան փողոց ելնել եւ երթալ Հիւսիս կամ հարաւ, Միւսնոյն անխնամ ձգուած խոտը գետնին, այնպէս ինչպէս երեւցած էր աչքիս 1980-ի ամառը: Լուացարան մը փնտռելու փորձիս մէջ անցայ տեսչարանին առջեւէն, նշմարելով բաց դռնէն Դաւիթ Արքեպիսկոպոսը, որ կը խորհրդակցէր խոշորակազմ տիրացու Արմէնի հետ, վաղը դէպի Հայֆա եւ Եմֆա կատարուելիք դպրոցական զբօսապտոյտի մասին: Կ'անդրադառնամ որ անպաշտօն կերպով հագուած եմ՝ սանտալ, շապիկ առանց բաճկոնի՝ այնպէս որ Սրբազանին մօտենալու եւ հետը խօսակցելու չեմ ձեռնարկեր:

Այս ընդարձակ շէնքէն ներս պատահմամբ գետնայարկ մեծ սրահի մը մէջ կը գտնեմ նոր, գունատիւ տպարանը, որու մեքենաներու արդէն իսկ Հին Ըլլալու մասին դիտողութիւն կ'ընէ պատասխանատու վարիչը աւելցնելով որ Սաուտի Արաբիայէն դրամական նպաստ ստացող Արաբական տպարաններ Երուսաղէմի մէջ շատ աւելի հասութեաբեր գործ կ'ընեն:

Վերի յարկը կ'ըլլամ առանձին, քննելու բաց դուռով սենեակներ, բան մը որ մեր խումբի անդամները առանց ինծի ըրած էին մի քանի օր առաջ եւ անմաքրութենէն զաղթակղած էին: Թափթիւքութիւն կը տիրէ: Գտայ բաղնիքի մեծ սենեակը, որու մէկ պատին շարուած են լողանքի ցնցուղներ: Այստեղ նեղ միջնորմի մը զազաթը դիզուած գտայ երեք նոյնաչափ փիտա հացի նկանակներ: Յայտնի չէ թէ որու կը պատկանին, եւ չեմ հասկնար թէ ի՞նչ գործ ունին այդ հացերը այս բաղնիքին մէջ, որու յատակը նետուելիք թափուելիք իրերու կոյտ մը կայ: Գետինը յայտնապէս պէտք ունի մաքրութեան:

Բաղնիքին դէմ յանդիման մեծ ննջասենեակի մը մէկ անկիւնը մահճակալի եզերք նստած կը կարդայ Պրազիլէն եկած ուսանող Վահէ Աթթարեան: Ան կ'ափսոսայ ժառանգաւոր ուսանողներու անհոգութիւնը մաքրութեան մասին: Իր անկիւնի երկու պատերուն վրայ կան մեծկակ լուսանկարներ, ոմանք գունաւոր, որոնք կը պատկերացնեն ժառանգաւորաց Վարժարանի նախկին տեսուչները: Զկան անոնց ինքնութիւնը ճշդող ցուցանակներ: Վահէ կ'ըսէ թէ նետուելու սահմանուած կոյտի մը մէջէն փրկած մաքրած է այս նկարները: Վահէի նոր սենեակկից է որպէս այցելու Պատրիարք Սրբազանի եղբորորդին Վահան, որ այս պահուն հաւանաբար զբաղած է Պատրիարքարան:

Վար իջնալով անգամ մը եւս կ'անցնիմ տեսչարանին առջեւէն: Սենեակին դուրսը ցուցատախտակի մը վրայ մեքենագրուած ցանկ մը փակցուած է, ժառանգաւորներու առօրեայ վարք ու բարքի կանոններ ծանուցանող: Այդ կանոններու շարքին է մաքրութեան պահանջը: Կը մտածեմ որ ապարդիւն է կանոններ գրել եւ ակնկալել որ տան մէջ կրթութիւն չտեսած մանուկ կամ պատանի զանոնք կարդալով յարգեն եւ գործադրեն:

Շահան Սարկաւագի խցիկը վերադառնալով, կ'առնեմ Մայքըլ եւ Լանա Քէիչեանի հասցէագրուած չորս հինգ կտոր պահարանները, եւ վերջնականապէս կը վերադառնամ Նօթր Ծամ: Կէսօր չեղած մեր պայուսակները ննջասենեակէն վար բերուած են: Ծալէն ետք սպասման սրահին մէջ Մէրին ու ես նարտ կը խաղանք եւ մի քիչ ալ կը մրախենք նստած: Ծալի միջոցին նշմարեցինք Ամերիկացի զոյգ մը մօտակայ սեղանին նստած: Ատանայի մօտ ինճիրլըք զինուորական օդակայանին մէջ գործող այր եւ կին օդանաւային սպաներ են, արձակուրդի եկած: Կ'ափսոսան որ խճողուած Նօթր Ծամ հիւրանոցը միայն երկու օր կրնայ օթեւանելու սենեակ տրամադրել իրենց: Կը մտածեն Տիրբերիաս երթալ արձակուրդի մնացեալ օրերը հոն անցնելու: Մարիամ՝ նախկին զինուորական, պատշգամին վրայ երկար խօսքի բռնուեցաւ անոնց հետ, եւ յետոյ ինձ յայտնեց անոնց հիասթափութիւնը ինճիրլըքի թուրքերու վարուելակերպի մասին:

Ժամը չորսին մօտ Արամ Խաչատուրեան եկաւ եւ թաքսիով մեզ պտտցուց նոր Երուսաղէմի մէջ: Տեսանք Պէն Եհուտա լայն պողոտայի եզերքը տեղ տեղ նստած նուագող հրեայ մարդիկ, հաւանաբար նախկին Սովետ Միութենէն եկած անգործ բայց ուսեալ երեւցող: Փոքր խանութ մը մտանք պաղպաղակի, սառած եռկուրք գնելու: Զովացուցիչը արտադրող կոչտ մեքենան բաւական ճոնչաց մինչեւ որ եռկուրքի նմանող մի քանի դգալ զովացուցիչ կրցաւ լեցնել փոքր բաժակի մը մէջ:

Թաքսիի վարիչին հետ սակարկելով Արամ Խաչատուրեան մեզ տարաւ Իսրայէլեան Քնէսէթի - Խորհրդարանի - բարձրագոյն շէնքին առջեւէն եւ քիչ ետք մտցուց Մեռեալ ծովու սուրբ Գրական մազաղաթներու թանգարանը: Այստեղ դասաւորումը, գրաւոր բացատրութիւնները գիտական եւ

գեղարուեստական տեսակէտէն բարձր մակարդակի վրայ են: Ափսոս որ թանգարանի փակման ժամը մօտ էր եւ ինչ որ կրցանք տեսնել վայելեցինք հապճեպով:

Դէպի Նօթր Ծամ վերադարձը առիթ եղաւ որ Արամ իր կեանքի մասին պատմէ մեզի: Ան գտնուած է արտասահման, եւ ուսանած է Երեւանի մէջ: Մտադիր է Պուլկարահայ բարեկամի մը թելադրութեամբ մօտ օրէն մէկ ամսուան արձակուրդի երթալ Պուլկարիա:

Ժամը երեկոյեան 7-ի մօտ Մովսէս Կարապետեան անունով երիտասարդ մը եկաւ փոքր կառքով մը մեզ հասցնելու Թէլ Ավիվ, Պէն Կուրիոն միջազգային օդակայանը: Սովորական ճամբայէն տարբեր քովընտի ուղիներէ կը տանի մեզ դէպի արեւմուտք: Կը տեսնենք լաւ մշակուած արտեր, քարքարուտ բլրակողեր, մայրիներու ծառաստաններ, սիրուն կղմինտրածածուկ նոր կառուցուած տուններու թաղամասեր եւ աւաններ ներգաղթող հրեաներու յատկացուած: Իսրայէլեան ներկայ կառավարութեան քաղաքականութիւնն է բազմացնել եւ զօրացնել այսպիսի աւաններ, հոգ չէ թէ տեղահան ըլլան Արաբախօս Պաղեստինցիներ:

Սուրբ Երկրին անդորրութիւնը խախտող այդ քաղաքականութեան պտուղները դիտելով, հետզհետէ կը հեռանանք խաղաղութեան քաղաք Երուսաղէմէն:

Մնաս բարով, սուրբ եւ ցանկալի քաղաք: Մնաս բարով հայկական թաղամաս պարսպապատ Երուսաղէմի: